Azg
armenian daily
26 ՅՈՒՆԻՍ 2003 ՀԻՆԳՇԱԲԹԻ 120 (2805)

Թուրքական կառավարությունը երկրի տարածքը բացեց դաշնակից ուժերի համար

Որոշումն ԱՄՆ-ի հետ Թուրքիայի ռազմավարական դաշինքի վերականգնման վկայությունն է

ՀԱԿՈԲ ՉԱԲԲԱՏԵԱՆ

Վերջերս **«Ազգը»** ԱՄՆ-ի հետ Թուրքիայի հարաբերություններին հաճախակի է անդրադառնում: Թերեւս դրա հիմքում հակաիրաքյան պատերազմի նախօրյակին ծայր առած թուրք-ամերիկյան տարաձայնություններն էին, որոնք աննախադեպ սրվեցին, երբ պաշտոնական Վաշինգտոնը, որպես դժգոհության դրսեւորում, նշանառության թիրախ դարձրեց ինչպես թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբը, այնպես էլ կառավարությունը:

Անդրադարձի հաճախակիությունը պատահական չէր: Ի վերջո, հակաիրաքյան պատերազմի ավարտին ԱՄՆ-ն Իրաքի վերակառուցմանը զուգընթաց պատրաստվում է վերակառուցել Մերձավոր եւ Միջին Արեւելքը: Դա ենթադրում է տարածաշրջանային երկրների ռազմավարական վերախմբավորման համար նրանց, այդ թվում՝ Թուրքիային նոր դերի բաշխում: Միաժամանակ ամերիկյան քաղաքականությունն աննախադեպ ակտիվանում է Անդրկովկասում եւ Միջին Ասիայում, իսկ դա հանգեցնում է Սիրիայի եւ Իրանի վրա գործադրվող ճնշումների ուժեղացմանը:

Ամերիկյան ճնշումներով Սիրիայի, առավել եւս Իրանի մեկուսացումը տարածաշրջանում, ինչ խոսք, բացասական հետեւանքներ է ունենում մեր հանրապետության միջազգային դրության վրա, թուլացնում է նրա դիրքերը հատկապես Թուրքիայի նկատմամբ: Գուցե Հայաստանը խուսափեր քաղաքական վերոհիշյալ զարգացումների բացասական ազդեցությունից, եթե նրա հարաբերությունները Թուրքիայի հետ աշխուժացնելու ԱՄՆ-ի վերջին նախաձեռնությունը չհամընկներ Անդրկովկասում վերջինի ակտիվացմանը:

Տես էջ 5

Թուրքիա-Հայաստան սահմանի բացումը մոտալո՞ւտ

Առաջիկա 10-15 օրվա ընթացքում Թուրքիան կարող է Գյումրու հատվածում բացել իր սահմանը Հայաստանի հետ, տեղեկացնում են ոչ պաշտոնական աղբյուրներ Թուրքիայից: Սահմանադրական բացումը նպաստակ ունի թույլատրելու սահմանային առեւտուրը երկու երկրների միջեւ, միաժամանակ գործադրության դնելով Վաշինգտոնից Անկարայի ստացած թելադրանքները հայ-թուրք հարաբերությունների մեղմացման ուղղությամբ:

Դեռեւս չճշտված այս տեղեկությունները կարող են անուղղակիորեն հաստատվել այն հանգամանքով, որ Թուրքիայի արտգործնախարարության հետախուզության եւ հետազոտության բաժնի աշխատակից, դեսպան Քադրի Էջվեթ Թեզջանը վերջերս ամերիկահայ տարբեր կազմակերպությունների հետ Մ. Նահանգներում ունեցած իր հանդիպումներում ակնարկել էր Թուրքիա-Հայաստան սահմանի վերաբացման մասին, այն ներկայացնելով իբրեւ Անկարայի «բարի կամքի դրսեւորում» Հայաստանի նկատմամբ:

«ՀԱՄԱՏԵՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՋԱՆՔ-2003»

ՆԱՏՕ-ի գեներալները գոհ են զորավարժությունների ընթացքից

Հունիսի 25-ին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ընդունեց «Համատեղ լավագույն ջանք - 2003» զորավարժության բարձրաստիճան այցելուների օրվա կապակցությամբ երեւան ժամանած ՆԱՏՕ-ի հարավային միացյալ հրամանատարության հրամանատար, գեներալ-լեյտենանտ Անտոնիո Կվինտանային եւ հրամանատարության մյուս գեներալներին:



Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստան ՆԱՏՕ հարաբերություններին առնչվող խնդիրներ: Կողմերը բարձր գնահատեցին «Համատեղ լավագույն ջանք - 2003» զորավարժությունների կազմակերպչական ընթացքը եւ նրա նշանակությունը Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի հարավային միացյալ հրամանատարության միջեւ համագործակցության հետագա զարգացման ու ամրապնդման գործում:

ՀՀ ՊՆ լրատվության եւ քարոզչության վարչություն

Դիակներ Սովետաշենի աղբանոցի մոտ

Երեկ կեսօրին, ժամը 2-ի մոտակայքում դեպի Նուբարաշեն գնացող վարորդները աղբանոցի մոտ, հենց ճանապարհի եզրին նկատել են 3 երիտասարդների դիակներ այն պահին, երբ անվտանգության ծառայության աշխատակիցները չափումներ ու տեղազննություններ էին կատարում: Էրեբունի թաղամասի որոշ բնակիչներ ավելի վաղ հրազենային կրակոցներ են լսել աղբանոցի կողմից:

Համապատասխան գերատեսչությունից մեզ չհաջողվեց որեւէ տեղեկություն ստանալ պատահածի մասին:

«Համասը» եւ պաղեստինյան այլ կազմակերպություններ եռամսյա հրադադար են առաջարկում

Պաղեստինի տարածքում հաստատված արեւմտյան լրագրողները «ոչ պաշտոնական աղբյուրներ» վկայակոչելով երեկ երեկոյան հաղորդեցին, թե պաղեստինյան ծայրահեղական գլխավոր 3 կազմակերպությունները՝ «Համասը», «Իսլամական ջիհադը» եւ «Ալ Ասսայի մարտիրոսների բրիգադը» միասնաբար համաձայնել են եռամսյա հրադադար հաստատել Իսրայելի հետ: Նրանք պատրաստել են մի փաստաթուղթ, որով պատրաստակամություն են հայտնում մորատորիում հաստատել Իսրայելի դեմ «ռազմական» ամեն տեսակի գործողությունների վրա 3 ամիս ժամանակով, Իսրայելի իշխանությունների կողմից ակնկալելով համապատասխան դիրքորոշում պաղեստինցի ժողովրդի նկատմամբ:

Այս դեռեւս պաշտոնապես չհաստատված տեղեկությունների, փաստաթուղթը ներկայումս կալանքի տակ գտնվող պաղեստինյան դիմադրական շարժման ղեկավարներից Մարուան Բարղուդիի մոտ է գտնվում՝ առ ի վավերացում: 3 կազմակերպությունները որոշել են փաստաթղթի վերջնական տարբերակը ներկայացնել Պաղեստինյան ինքնավարության նախագահ Յասեր Արաֆաթին (եւ ոչ վարչապետ Մահմուդ Աբբասին)՝ իսրայելական հակազդեցության համաձայն այն գործածելու համար:

Մինչ այդ իսրայելական բանակը երեկ շարունակում էր Գազայի շրջանում «Համասի» ղեկավարների հետապնդումն օդից եւ ցամաքից: Պաղեստինյան Խան Ունիս բնակավայրի մոտ իսրայելական օդուժը հրթիռակոծեց 2 ավտոմեքենաներ, որոնցից մեկի մեջ «Համասի» պատասխանատու ծանր վիրավորվեց, իսկ մյուսի ուղեւորներն սպանվեցին:

Մյուս կողմից, եվրամիության նախագահության հետ բանակցությունների ավարտին Մ. Նահանգների նախագահ Ջորջ Բուշը եվրամիության այժմյան նախագահ եւ Հունաստանի վարչապետ Կոստաս Սիմիտիսի հետ համատեղ ասուլիսում հայտարարեց, որ «անհրաժեշտ է կազմալուծել «Համաս» ահաբեկչական կազմակերպությունը», որպեսզի խաղաղություն ի վերջո հաստատվի Պաղեստին-Իսրայել հարաբերություններում:

Կարքը մնաց կոկորդում

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից, 2003 թ. հունիսի 24-ին ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ վարչության աշխատակիցների ձեռնարկած օպերատիվ միջոցառումների արդյունքում Երեւանի մի բնակչի բնակարանին կից կառուցված անօրինական շինությունն օրինականացնելու եւ սեփականության վկայական տալու համար 1200 ԱՄՆ դոլար կաշառք ստանալու փաստով մերկացվել է կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի էրեբունու տարածքային ստորաբաժանման գնահատման բաժնի պետ Լյովա Անտոնյանը: Կաշառք վերցնելու փաստով նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Եվրախորհուրդն ակնկալում է, որ մահապատիժը Հայաստանում սեպտեմբերին արդեն վերացված կլինի

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, 25 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգային հանձնաժողովի նիստում քննարկվել է Հայաստանում մահապատժի վերացման հարցը, եւ այդ կապակցությամբ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ուղղված նամակ է ընթերցվել՝ ժամկետների նշմամբ, թե ինչպես վերացնել մահապատիժը եւ ինչ ժամկետներում: Վերջին ժամկետը նշվել է մինչեւ հունվարյան նստաշրջանը:

Այս կապակցությամբ պարոն Յաստերնյայի գլխավորած Հայաստանի պարտավորությունների կատարմանը հետեւող խումբը օգոստոսին արդեն կժամանի Հայաստան, տեսնելու, թե ինչ ընթացք կա: Խումբը մեկ անգամ եւս Հայաստան կժամանի երկրի խորհրդարանի աշխատանքները սկսվելուց հետո՝ սեպտեմբերին: Ինչպես տեղեկացրել է հայկական պատվիրակության ղեկավար Արմեն Ռուստամյանը, խմբի անդամները հույս են հայտնել, որ աշնանային նստաշրջանի ժամանակ արդեն Հայաստանում կվերացվի մահապատիժը, եւ Ստրասբուրգի հունվարյան նստաշրջանում, երբ ընդհանուր քննարկման կենթարկվի ՀՀ պարտավորությունների կատարման ընթացքը, մահապատժի հարցը այլեւս քաղաքական օրակարգից դուրս եկած կլինի:

Իրանում վթարի է ենթարկվել երկրի նախագահի ինքնաթիռը. յոթ մարդ զոհվել է

ԹԵՀՐԱՆ, 25 ՀՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թեհրանից ոչ հեռու ջախջախվել է Իրանի նախագահի C-130 Hercules ռազմափոխադրական ինքնաթիռը: Համաձայն IRNA-ի, աղետի հետեւանքով զոհվել են ինքնաթիռում գտնվող բոլոր յոթ անձինք: Ինքնաթիռը ընկել է իրանական մայրաքաղաքից 19 մղոն դեպի հարավ-արեւմուտք գտնվող Ռոբաթքարիմ քաղաքի մոտ: Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամին պետք է չորեքշաբթի հանդիպում ունենար քաղաքի բնակիչների հետ, սակայն նա չի եղել ինքնաթիռում, «Ռոյթեր» գործակալությանը հայտնել է Իրանի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը: Վերջին տարիներին Իրանում տեղի են ունեցել մի ամբողջ շարք ավիաաղետներ: Ամերիկյան պատժամիջոցների հետեւանքով Իրանի համար դժվար է պատշաճ մակարդակի վրա պահել իր օդային նավատորմը, որ հիմնականում բաղկացած է ԱՄՆ-ից դեռ մինչեւ 1979 թվականը բերված ինքնաթիռներից:

ՑԵՐՈՍԱՐՇՈՒԹՅՈՒՆ

«Թուֆենկյանի» հերթական հյուրանոցը Սեւանա լճի ափին

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Առաջին անգամ նյույորքաբնակ գործարար Ջեյմս Թուֆենկյանը Հայաստան եկավ 1993 թ. եւ իր գործունեությունը սկսեց՝ ունենալով ընդամենը 3 աշխատակից: Ներկայումս «Թուֆենկյան-Հայաստան» ընկերությունն ունի շուրջ 1700 աշխատակից, որից 1200-ն ընդգրկված է գորգագործության մեջ:

Երեկ ընկերությունը մամուլի ասուլիս էր կազմակերպել Սեւանա լճի ափին, Ծափաքաղ գյուղում գտնվող նորակառույց «Ավան մարգ Ծափաքաղ» հյուրանոցում: Մինչ այդ լրագրողներն այցելեցին «Թուֆենկյանի» Երեւանում գտնվող գորգագործության արտադրամաս: Ընկերության գորգերի մասին բազմիցս է գրվել (այդ թվում՝ **«Ազգի»** էջերում): Դրանք հանրաճանաչ են ամբողջ աշխարհում: Այդ ձեռագործ գորգերը զարդարում են բազմաթիվ



աշխարհահռչակ անձանց, այդ թվում մի շարք հոլիվուդյան աստղերի (Սիլվեստեր Ստալոնե, Առնոլդ Շվարցենեգեր, Կիմ Բեսինջեր, Շեր) տները: Արտադրվում են տարբեր չափի եւ ձեւավորման գորգեր, ըստ պատվիրատուի ճաշակի եւ տվյալ սենյակի կահավորանքի: Հիմնականում դրանք արտահանվում են: Ընկերությունը նպատակ ունի ամրապնդվել ներքին շուկայում:

Տես էջ 2

Ընդեմ թմրաբիզնեսի եւ թմրամիջոցների

Թմրաբիզնեսի եւ թմրամիջոցների չարաշահման ընթացքում առաջացող տնտեսական կախվածությունը սպառնալիք է կանանց, տղամարդկանց եւ երեխաների առողջության, կարգ ու կանոնի եւ ի վերջո՝ համայնքների կայուն զարգացման համար: Այս տարի հունիսի 26-ը հայտարարված է թմրանյութերի չարաշահման ու ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր, եւ այսօր ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակում տեղի կունենան մի շարք միջոցառումներ՝ զեկուցումներ, ցուցահանդես, ֆիլմերի ցուցադրություն:

«Ազգի» ընթերցողներին ներկայացնենք «Թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիտորինգի կենտրոնի» (տնօրեն՝ Նազելի Ասրիան) հետազոտություններից՝ համաձայն ՀՀ ոստիկանության տրամադրած տվյալների: ՀՀ-ում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների թիվը վերջին 5 տարիների ընթացքում զգալի նվազել է: եթե 1998 թ. բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության (ԹԱՇ) 711 դեպք, ապա 2002-ին՝ 453 դեպք: ԹԱՇ-ի ոլորտում ներգրավված անձանց 71 տոկոսը չունի եկամտի մշտական աղբյուր, 1,9 տոկոսն ուսանողներ են: Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների գրեթե 1/3-ը տեղի են ունեցել Երեւան քաղաքում: Դեպքերը գրանցվել են. Երեւանում՝ 158, Շիրակի մարզում՝ 50, Սյունիքի մարզում՝ 48, Լոռու մարզում՝ 40 դեպք: Թմրամիջոցների, թմրամոլության, հոգեմետ նյութերի եւ պրեկուրսորների ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության է ենթարկվել 418 անձ (2001 թ. 429-ի դիմաց), որոնցից 24-ը՝ կին, 4-ը՝ անչափահաս: Նրանցից 260-ը՝ 30-49 տարեկան, 63-ը՝ 25-29, 38-ը՝ 18-24 տարեկան անձինք: Եթե համեմատելու լինենք նախորդ տարիների հետ, ապա 1997 թ. թմրամոլության հետ կապված հանցագործությունների թիվը եղել է 619-ը, 1998-ին՝ 711, 1999-ին՝ 514, 2000-ին՝ 497, 2001-ին՝ 451, 2002-ին՝ 453:

Վրաստանում ԹԱՇ-ի համար ձերբակալվել է 3546 անձ, որոնցից 353-ն ունեն նախկին դատվածություն, 137-ը կին է, 34-ը՝ անչափահաս, 69-ը՝ տեղահանված անձինք: Իսկ Ադրբեջանում թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց թիվը 2002 թ. կազմել է 34501 անձ, որոնցից 16137-ը 15-59 տարեկան օգտագործողներ են, իսկ հանցագործությունների թիվը կազմել է 2196 դեպք:

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած տվյալների համաձայն, 2002 թ. ընթացքում ԹԱՇ-ի դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է 453 հանցագործությունների եւ 497 իրավախախտումների դեպքեր: «Կանեփ-կակաչ-2002» համալիր կանխարգելիչ միջոցառման ընթացքում հայտնաբերվել եւ ոչնչացվել է 155 տոննա 602 կգ կանեփի եւ կակաչի զանգված, ինչպես նաեւ հայտնաբերվել եւ առգրավվել է 76 կգ 839 գ տարբեր տեսակի թմրամիջոցներ:

Հայաստանում թմրամոլների գերակշռող մեծամասնությունը 2002 թ. օգտագործել է կակաչի ծղոտ՝ 1485,0 գ, ափիոն՝ 77,55 գ, «Կանաբիս» (մարիհուանա՝ 76083.695 գ, հաշիշ՝ 914,35 գ) խմբին պատկանող թմրամիջոցներ, որոնք պատրաստվում են տեղական հումքից:

Մասային պետական կոմիտեի եւ պետական սահմանային ծառայության աշխատակիցների կողմից առգրավվել եւ ոչնչացվել է 501 տ 510 կգ ապօրինի թմրամիջոց:

Ներկայումս աշխարհում մոտ 200 մլն մարդ օգտագործում է ապօրինի թմրամիջոցներ: Դա նշանակում է, որ երկրագնդի 14 տարեկանից բարձր անձանց 4,7 տոկոսը օգտագործում է թմրամիջոցներ: Այս մարդիկ արդեն իսկ վնասում են իրենք իրենց: Սակայն թմրամիջոցների չարաշահման հետեւանքները տարածվում են նաեւ այլոց վրա եւ հասարակությանը պատճառում առողջական, սոցիալական ու տնտեսական անհաշվելի վնասներ, ներառյալ ՁԱՎ-ը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆԿԱՐՅԱՆ

Իտալիայի նոր դեսպան Մարկո Կլեմենտեն հանձնեց հավատարմագրերը

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին երեկ իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Իտալիայի նորանշանակ դեսպան Մարկո Կլեմենտեն:

Դիվանագետը հավաստել է իր երկրի պատրաստակամությունն ընդլայնել Հայաստանի հետ փոխգործակցության շրջանակները՝ նշելով, որ ուրախ է ներկայացնել Իտալիան մի երկրում, որն ունի հինավուրց քաղաքակրթություն եւ հարուստ մշակույթ:

Հանրապետության նախագահը գոհունակություն է հայտնել հայ-իտալական քաղաքական երկխոսության եւ տնտեսական հարաբերությունների ներկա մակարդակի առթիվ՝ շեշտելով, որ դրանք զարգանում են բավականին դինամիկ: Նրա խոսքով, տարեցտարի երկու երկրների միջեւ աճում է աղրանքաշրջանառության ծավալը, ընթացքի մեջ են մի շարք ներդրումային ծրագրեր: Զրուցակիցները որպես փոխգործակցության հեռանկարային ոլորտներ նշել են մշակույթը, զբոսաշրջությունը:



Ռոբերտ Քոչարյանը Իտալիայի հետ հարաբերությունների զարգացումը կարեւոր է դիտել նաեւ Հայաստանի արտաքին քաղաքականության եվրոպական ուղղության համատեքստում:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Առողջ ազգի կերտման հրամայականը

Դեռ 2001 թվականին մասնագետների ու նախանձախնդիր մտավորականների մի խումբ նախաձեռնեց եւ Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում կազմակերպեց «Ազգային բանակին՝ առողջ զինվոր» թեմայով հանրապետական գիտաժողով: Վերջին տարիների մասնագիտական հետազոտությունների արդյունքների այստեղ ուրվագծված պատկերը ծնունդ տվեց համանուն գիտակրթական ծրագրի անհրաժեշտության գաղափարին՝ որպես համազգային հրատապ խնդիր: Սկսված խոսակցությունը ավելի լայն տեսանկյունով շարունակվեց նույն գիտաժողովի շրջանակներում անցյալ տարվա նոյեմբերին անցկացված «Աճող սերնդի ֆիզիկական եւ բարոյահոգեբանական պատրաստականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում եւ դրանց լուծման ուղիները» թեմայով «կլոր սեղանի» քննարկումներում, որոնց մասնակցելու էին հրավիրվել նաեւ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, կրթության եւ գիտության նախարարության, Հայաստանի բուհերի, տեղական իշխանության եւ մտավորականության ներկայացուցիչներ, մասնագետներ դպրոցներից, այլ ուսումնական հաստատություններից: «Կլոր սեղանի» նյութերը, որոնց ժողովածուն վերջերս ընթերցողին է հանձնել Գյումրու «Դպիր» հրատարակչությունը, հիրավի կենսական կարեւորության խնդիր են առաջ քաշում:

Ըստ տարբեր մասնագետների գնահատումների, մեր երկրում շարունակվող հատկապես տղամարդ բնակչության արտագաղթը, այս եւ այլ պատճառներով ժողովրդի վերարտադրության ցուցանիշների կտրուկ նվազումը, տիրող սոցիալական, բարոյահոգեբանական վիճակը մեծ վտանգ են սպառնում ազգային անվտանգությանը եւ բանակի համալրմանը: Ի վերջո, տեսանելի ապագայում վտանգվում է ազգային բանակի թե՛ քանակը, թե՛ որակը: Երկրորդ դեպքում խոսքն ամենից առաջ վերաբերում է զինվորների, նորակոչիկների առողջությանն ու ֆիզիկական պատրաստությանը, որը բանակում հատկապես առաջնային նշանակություն ունի: Վերջին տասնամյակի ուսումնասիրություններով պարզվել է, որ հանրապետության դպրոցականների, նախազորակոչային տարիքի երիտասարդների միայն նվազ (ըստ որոշ տվյալների՝ 25–30) տոկոսն է առողջ եւ պատրաստ բանակի շարքերում ծառայելու: Նրանց մեծ մասն ունի տարբեր բնույթի հիվանդություններ, որի պատճառով առկա է զինծառայությունից ազատվածների զգալի թվական աճ: Եվ որ ավելի վատ է, ըստ նշված տվյալների՝ բանակ զորակոչվող երիտասարդների միայն 12–15 տոկոսն է առողջ, հետեւաբար՝ ընդունակ լիարժեք զինվորական ծառայության: Մնացածները թուլակազմ են, թերաճ, ֆիզիկական զարգացման շեղումներով: Զինվորների ֆիզիկական պատրաստվածության ու հոգեկան պատրաստականության բացերը լրացնելու, նրանց մեջ անհրաժեշտ բարոյակամային հատկանիշներ դաստիարակելու ուղղությամբ բանակում հարկ է լինում լրացուցիչ ծավալուն աշխատանք կատարել ի հաշիվ մարտական պատրաստականությանը տրամադրվող ժամանակի:

Մասնագետները տեղին են նշում, որ ազգային բանակն առողջ զինվորներով համալրելն առանձին լուծելի խնդիր չէ եւ պետք է լուծվի ավելի լայն ու հիմնարար՝ «ազգին առողջ զավակներ» համատեքստում: Իրոք դժվար է պատկերացնել, որ վատառողջ, թույլ, ֆիզիկապես վատ զարգացած սերունդը մտքի ու ոգու մեծ խիզախումներ կունենա, իսկ ազգը՝ հուսալի ապագա: Այսինքն խնդիրն ընդհանրապես ազգի առողջ գենոֆոնդի պաշտպանությունն է: Մանավանդ սուղ բնական պաշարներ ունեցող երկրում, ինչպես նշվում է, ազգի գլխավոր ռեսուրսն իր զավակներն են, նրանց ֆիզիկական, մտավոր եւ հոգեւոր ներուժը, որի պահպանումն ու վերարտադրությունը ազգային անվտանգության գերակայություններից մեկը պետք է լինի: Առողջ զինվոր առողջ մայրերն են ծնում, առողջ հասարակությունն է դաստիարակում: Մինչդեռ վիճակագրական տվյալները վկայում են, որ Հայաստանի բնակչության առողջական վիճակը տարեցտարի վատանում է: Մասնագետներն ընդգծում են, որ հաղթելն այլեւս անթույլատրելի է, եւ հետագա անցանկալի իրավիճակի առջեւ չկանգնելու համար հարկավոր է մշակել պետական միջոցառումների համալիր ծրագիր: Առողջ ազգի կերտման գաղափարը պետք է դառնա մեր պետական քաղաքականության հիմնաքարերից մեկը, հասարակության համախմբման կարեւոր առանցք: Իսկ այստեղ մեծ դեր է պատկանում ֆիզիկական դաստիարակությանը, որը համարվում է առողջության հիմք: Անհրաժեշտ է համարվում արմատապես բարելավել դրա դրվածքը հատկապես դպրոցում, ֆիզդաստիարակությունը արդյունավետ համատեղելով երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության հետ, ունենալ դաստիարակության ազգային համակարգ: Վերականգնել բնակչության շրջանում զանգվածային մարզական աշխատանքները, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումները, սպարտակիադաները, երիտասարդների ռազմամարզական խաղերը եւ այլն:

Սա համալիր խնդիր է, որն առնչվում է ոչ միայն կրթական համակարգին, այլեւ առողջապահությանը, սոցիալական եւ մի շարք այլ ոլորտների, պահանջելով նաեւ երկրի նախագահի, կառավարության, Ազգային ժողովի գործուն մասնակցությունը դրա լուծմանը: Մասնավորապես առաջարկվում է Ռուսաստանի օրինակով ՀՀ նախագահին առընթեր ստեղծել համադասող խորհուրդ, որը համակողմանիորեն կուսումնասիրի հիմնահարցը, կմշակի համապատասխան հայեցակարգ եւ ծրագիր, կվերահսկի վերջինիս իրականացումը: «Կլոր սեղանի» մասնակիցները նաեւ այս բովանդակությամբ ուղերձ են հղել հանրապետության նախագահին:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

«Թուֆենկյանի» հերթական հյուրանոցը Սեւանա լճի ափին

Սկիզբը էջ 1

«Թուֆենկյանի» գործունեության հաջորդ երկու ոլորտներն են շինարարությունն ու դիզայնը եւ հյուրանոցաշինությունը: Մասնավորապես ընկերության հյուրանոցները նախագծած, կառուցված եւ կահավորված են հայկական ճարտարապետության ոճով: Համարները կահավորված են հայ վարպետների պատրաստած կահույքով, ձեռագործ գորգերով, հայ նկարիչների աշխատանքներով:

Մինչեւ 2005 թ. նախատեսվում է 5 հյուրանոցային համալիրների շահագործում Հայաստանի տարբեր մարզերում: Արդեն իսկ գործում են Երեւանի «Ավան վիլլա Երեւան» եւ «Ավան մարմնի ծափաքաղ» հյուրանոցները: Վերջինս ունի 34 սենյակ՝ 90 հյուր ընդունելու համար: Համարների արժեքը տատանվում է 46–120 դոլարի սահմաններում: Որպես շինանյութ հյուրանոցի կառուցման համար օգտագործվել են գյուղի շրջակայքի կանաչ եւ դեղնավուն քարերը: Սենյակների ներքին ձեւավորումը բնական բաղադրություն ունի: Այստեղ ամենինչ պատրաստված է փայտից, քարից, երկաթից, իսկ Իջեւանի թերթաքարն



օգտագործվել է լոգարանում, ինչի շնորհիվ լոգանքի ժամանակ խոնավացած քարի բուրմունքը ծովափում գտնվելու զգացողություն է թողնում:

Հյուրանոցի առավելությունը հենց վերը նշած յուրահատկության եւ ազգային ոճի մեջ է, այլապես բարձրակարգ եւ ընդունված ձեւերով կառուցված հյուրանոցներով այսօր ոչ ոքի չես զարմացնի: Նման հյուրանոցային համալիրները հնարավորություն են ընձեռում հատկապես օտարերկրացի զբոսաշրջիկներին ծանոթանալու հայկական ճարտարապետությանը, ավանդույթներին, կենցաղին: Բնականաբար, մարզերում նոր հյուրանոցների շարք մտնելը նաեւ նշանակում է լրացուցիչ աշխատատեղեր տվյալ բնակավայրերում, ենթակառուցվածքների զարգացում:

Ծափաքաղում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ ընկերության ներկայացուցիչները նշեցին նաեւ, որ մինչեւ տարեվերջ կավարտվի Լոռու մարզի Չորագետ գյուղի հյուրանոցը: Ընտրված է Վայոց ձորի մարզում կառուցվելիք հյուրանոցի տեղը: Այն կկառուցվի Արենի գյուղում: Սյունիքի մարզում նախատեսված հյուրանոցի տեղը դեռեւս որոշված չէ: Լրագրողները տեղեկացան նաեւ, որ մինչ այժմ ընկերությունը Հայաստանում շուրջ 8 մլն դոլար ներդրում է կատարել: Նախատեսվում է, որ մինչեւ 2010 թ. ընկերությունը Հայաստանում կունենա մոտ 10 հազար աշխատակից: Այս առումով ցանկալի համարվեց, որ Թուֆենկյանի օրինակին հետեւեն նաեւ մեր մյուս հայրենակիցները եւ ներդրումներ կատարեն Հայաստանում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Թիվ 18-ում, ըստ Սուրեն Աբրահամյանի, ընտրախախտումները նախօրոք ծրագրված էին

Ի դեպ՝ խիստ ցայտուն ստեղծագործ

Սահմանադրական դատարանի երեկվա նիստում քննարկվող դիմումը ներկայացրել էր թիվ 18 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու գրանցված ՆԳ նախկին նախարար Սուրեն Աբրահամյանը: Այս ընտրատարածքում ընտրական հանձնաժողովը հաղթող է ճանաչել Գեւորգ (Վլադ) Հակոբյանին 7313 ձայնով: Սուրեն Աբրահամյանը Գեւորգ Հակոբյանին զիջել է 2200 ձայնով:

Ըստ դիմող կողմի՝ ընտրատարածքում խախտումները բազմաթիվ են եղել եւ ելնելով դրանցից, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը չպետք է ամփոփեր ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները:

Այս ընտրատարածքում ընտրախախտումների ցցուն օրինակներով դիմողն առանձնացրել էր 6 ընտրատեղամաս: Դրանցից յուրաքանչյուրում խախտումների ընդհանուր սցենարը, ըստ դիմումատուի, եղել է գրեթե նույնը եւ նախօրոք ծրագրված:

Ընտրատարածքի 0403, 0406, 0408, 0409, 0413, 0414 տեղամասերում քվեարկության օրը, որպես ընդհանրական երեւույթ, տեղի է ունեցել հետեւյալը: Այս ընտրատեղամասերի մեծ մասում քվեարկության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը մոտ 4-5 ժամ ոչինչ չի արել: Եվ դա այն պատճառով, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահները տարբեր պատճառաբանություններով լքել են տեղամասային հանձնաժողովի գտնվելու վայրը՝ չկատարելով օրենսդրությամբ պահանջվող գործողությունները:

Թիվ 0406 տեղամասում, ըստ դիմումատուի, սխալ է հաշվարկվել մասնակիցների եւ կողմ քվեարկողների քանակը, ընտրացուցակներում առկա են նույն ձեռագրով տարբեր անուններ դիմաց դրված ստորագրություններ, քվեատուփերում եղել են չծալված քվեաթերթիկներ: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն այդ տեղամասում ընտրությունների ընթացքում չի արձանագրել խախտումներ, հետեւաբար չի դիմել իրավապահ մարմիններին՝ դրսեւորելով անգործություն:

Մեկ այլ տեղամաս, ըստ դիմումատուի, խախտումների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով տեղամասը հոսանքազրկվել է: Նախ՝ քվեարկության ավարտից հետո հանձնաժողովն ամբողջովին ընդմիջել է իր աշխատանքները 3-4 ժամով: Նման ընդմիջումը տեղամասային հանձնաժողովի նախագահը բացատրել է, որ վաղ է զգում եւ հոգնած է: Հանձնաժողովի նախագահի վերադարձից հետո հանձնաժողովը չի սկսել հաշվարկել մասնակիցների թիվն ըստ ընտրացուցակներում առկա ստորագրությունների եւ չօգտագործված քվեաթերթիկները: Դրա փոխարեն միանգամից դատարկել են քվեատուփը: Հենց այդ ժամանակ պատեհ տարբերակով տեղամասային կենտրոնը հոսանքազրկվել է: Գուցե թե պատրաստված լինելով նման «զարգացումների», վստահված անձանցից մեկի լատերի լուսավորմամբ պարզվել է, որ մթության մեջ հանձնաժողովի նախագահը եւ մի քանի անդամներ քվեաթերթիկների կույտի վրա ավելացնում են քվեաթերթիկներ: Ի դեպ, մեկ տեղամասի օրինակով քվեաթերթիկներ են լցվել համամասնական ընտրակարգով Հանրապետական կուսակցության համար, իսկ մեծամասնական ընտրակարգով՝ Գեւորգ Հակոբյանի:

Թիվ 0409 տեղամասում համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով քվեարկողների ստորագրությունների տարբերությունը կազմել է մոտ 1200: Եղել են դեպքեր, երբ քվեարկված քվեաթերթիկները եղել են ավելին, քան ստորագրությունները, ընդ որում՝ քվեաթերթիկները չեն եղել քառածալ:

Տեղամասերից մի քանիսում վստահված անձանց եւ դիտորդների հաշվարկներով, քվեարկել է մի քանի հարյուր ընտրող, մինչդեռ ամփոփիչ արձանագրություններով մասնակիցների թիվը որպես կանոն անցել է 1500-ից:

Թիվ 0413 տեղամասում առանձնահատկությունը հասել է այնտեղ, որ, ըստ դիմումատուի, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները համաձայնության են եկել չօգտագործված քվեաթերթիկները բաժանել թեկնածուների միջեւ:

Որպես ընդհանուր երեւույթ նշված տեղամասերի համար դիմումատուն նշեց, որ ընտրացուցակները քվեարկության ավարտից հետո դուրս են հանվել տեղամասային կենտրոններից հանձնաժողովի նախագահների կողմից:

Այս եւ այլ խախտումների մասին թեկնածու Սուրեն Աբրահամյանը 5 դիմում է ներկայացրել Էրեբունու համայնքի դատախազին: Դատախազությունը ոչ մի կերպ չի արձագանքել նշված դիմումներին: Պրն Աբրահամյանի անունից հայցադիմում է ներկայացվել նաեւ Էրեբունու եւ Նորք-Մարաշի համայնքների առաջին ատյանի դատարան, որը դատավորը մերժել է ընդունել վարույթ, ըստ դիմումատուի՝ ոչ ճիշտ հիմնավորմամբ:

Սուրեն Աբրահամյանի ներկայացուցչի համաձայն, ընտրատարածքում սխալ է հաշվարկվել նաեւ անճշտությունների չափը, որն իրականում կազմել է 1360: Եթե այս թվի հետ մեկտեղ նկատի առնվեն նաեւ թվարկված տեղամասերի խախտումները, ապա դրանք, համաձայն դիմումատուի, կարող էին էապես ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Ընտրացուցակային խախտումների առնչությամբ, դատարանում նշվեց հետաքրքրական մի հանգամանք եւս: Պարզվել է, որ, օրինակ, Էրեբունու համայնքի Աթոյան փողոցում բնակվող մոտ 300 ընտրողներից գրեթե 50 տոկոսը ծնվել է հունվարի 1-ին:

Դիմումատուն միջնորդեց 5 տեղամասերում ոստիկանության անձնագրային բաժիններին հանձնարարել ստուգել ընտրացուցակները: Միջնորդություն եղավ նաեւ ստուգելու վերահաշվարկների, հոսանքազրկումների վերաբերյալ նյութերը:

Պատասխանող կողմ հանդիսացող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նշված երեւույթները չժխտեց ամբողջությամբ, սակայն տվեց այլ բացատրություններ: Մասնավորապես հոսանքազրկվել է միայն 1 տեղամաս՝ այն էլ 1-2 րոպեով, իսկ որ այդ պահին հանձնաժողովի նախագահը եւ ինչ-որ անդամներ քվեաթերթիկներ են ավելացրել քվեատուփի դատարկված պարունակությանը, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը բացատրեց նրանով, որ նշված անձինք ընդամենը գետնից բարձրացրել են ընկած քվեաթերթիկները:

Ընդհանուր առմամբ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ժխտեց բոլոր խախտումների մասին ասվածները: Դեռ ավելին՝ հանձնաժողովը խախտումների հարցում փոխադարձ մեղադրանքներ ներկայացրեց Սուրեն Աբրահամյանին:

Ինչեւէ, Սահմանադրական դատարանը նիստը հետաձգեց մինչեւ ուրբաթ օրը՝ բավարարելով վերը նշված միջնորդությունը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ ՓՈՂՈՑ

Կանաչ տարածքների դեմ պատերազմ է հայտարարվել

Մայրաքաղաքի իրականության մեջ կարծես սովորական երեւույթ է դարձել, որ օրեցօր, հետեւողական կերպով պակասում են կանաչ տարածքները: Ըստ էկոլոգիական հասարակական կազմակերպությունների նախաձեռնող խմբի տվյալների, բնաջրհեղեղային նորմատիվների անհրաժեշտ 40 տոկոսի փոխարեն երեւանի կանաչապատման ցուցանիշը 2,5 տոկոս է: 2002 թ. քաղաքի ընդհանուր տարածքի 92 հազար 600 հեկտարից ծառաթփածածկույթը կազմել է 570 հա: Մայրաքաղաքային իշխանություններն իրենք են փաստում տագնապալի այս իրողությունը՝ միեւնույն ժամանակ շարունակելով «պատերազմը» կանաչ տարածքների դեմ: Այժմ էլ հերթը Պուշկինի 43 շենքի դիմաց գտնվող պտղատու այգուն է հասել: 1990 թ. բնակիչներն աղբից մաքրել էին շենքին հարող տարածքը, սեւահող լցրել, տնկել շուրջ 60 պտղատու ծառ եւ ցանկապատել: Տարիներ շարունակ մարդիկ խնամում են ծառերը, այգին թթվածնի աղբյուր է շրջակա շենքերի բնակիչների համար, ծիրանի, դեղձի, ընկույզի եւ այլ ծառերի պտուղներից էլ կարող են օգտվել ցանկացողները: Սակայն մարդիկ տագնապով տպասում են, որ մոտ ապագայում 13 տարեկան այգին հատվելու է: Անցյալ տարվա հոկտեմբերին սկսվեց գործընթացը, երբ այգու տարածքի մի մասը հատկացվեց անհատ ձեռներեցի՝ կառուցվեց ավտոմեքենաների լվացման կետ: Այդ ժամանակ բնակիչները հարկ չհամարեցին բողոքել, քանի որ ծառերը չկտրվեցին, այլ տեղահանվեցին: Տագնապի պատճառ է դարձել, որ բնակիչներն իմացել են, թե, կառավարության որոշման համաձայն, այգու մնացած տարածքը եւս հատկացվել է ինչ-որ մեկին: Դեռ պարզ չէ, թե ինչպես կտնօրինվի այգու տարածքը, սակայն պարզ է, որ սեփականատերը գումարը չի ծախսել, որ այգին պահպանի:

Բնակիչներն այգին պահպանելու փորձեր են անում: Մի քանի տասնյակ բնակիչների ստորագրություններով նամակ է ուղարկվել մեր թերթի խմբագրություն, պատրաստվում են դիմել քաղաքապետարան, կառավարություն եւ այլ ատյաններ՝ այգին կտրելու վտանգից փրկելու համար:

Այս այգուն էլ հասան: Թեեւ դժվար է պատկերացնել, որ քաղաքի կենտրոնում գտնվող «յուղոտ պատառը» կանտեսվեր: Հետաքրքրական է, որ դեռ մի բան էլ ուզում են: Ինչո՞ւ կանաչ տարածք թողնել, այն էլ երեւանի կենտրոնում, եթե կարելի է շահավետ տնօրինել: Քաղաքն, անշուշտ, արագ թափով զարգանում է, սակայն, չգիտես ինչու, անընդհատ երեւանցիներիս թթվածնի հաշվին...

Մ. Հ.

Նորաստեղծ «Կին» հասարակական կազմակերպությունը

Երիտասարդական նախաձեռնությամբ նորաստեղծ «Կին» հասարակական կազմակերպության շուրջ համախմբված են ընդհանուր նպատակներով եւ գաղափարներով համակված ուսանողներ: Հայ իրականության ներկա փուլում շատ է խոսվում հասարակական եւ քաղաքական կյանքում կնոջ պասիվ դերի մասին: Իսկ հայ կնոջ ավանդական նկարագրի խաթարումները մտահոգիչ երեւույթներ են նկատվում, որոնց պատճառները ազատության նորօրյա ըմբռնումների աղավաղված չափանիշներն են ըստ էության: Այդ ուղղությամբ դրական գործունեություն է ծավալելու «Կին» հասարակական կազմակերպությունը՝ տարբեր միջոցառումներով ակտիվացնելու համար կնոջ դերը հասարակությունում մանկավարժական եւ դաստիարակչական, ուսուցողական եւ մշակութային տարաբնույթ ծրագրերի իրականացման, ինչպես նաեւ հոգեբանական եւ իրավաբանական խորհրդատվության միջոցով: «Կին» ՀԿ-ն ձգտում է նպաստել հայ կնոջ ավանդական եւ բարոյահոգեբանական արժեքների համակարգի նորովի ձեւավորմանը: Ինքնուրույն, ինչպես նաեւ հասարակական այլ կազմակերպությունների համագործակցությամբ կանցկացվեն սեմինարներ, քննարկումներ, կլոր սեղաններ, հանդեսներ, մշակութային հանդիպումներ, միջոցառումներ:

Հուսանք, որ երիտասարդական այս կարեւոր նախաձեռնությունն արդյունավետ կլինի՝ նպաստելով հասարակության մթնոլորտի առողջացմանը, քանի որ միսված է հայ ընտանիքի բարեկեցությանը եւ ներդաշնակությանը:

Մ. Ք.

ԼՂՀ

Ճամբարները կգործեն ամառվա կեսից

Այս ամառ արցախցի 1100 երեխաներ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն հանրապետության տարածքում գործող 13 մանկապատանեկան առողջարարական ճամբարներում, որի նպատակով ԼՂՀ կառավարությունը տրամադրել է 13 մլն 990 հազար դրամ:

Ճամբարները կգործեն ինչպես մայրաքաղաք Ստեփանակերտում, այնպես էլ շրջաններում: Ըստ տիպերի՝ դրանցից 8-ը կգործի շուրջօրյա, իսկ 5-ը՝ ցերեկային: Հիմնական ճամբարավայրերը կլինեն դպրոցները, իսկ ահա Մարտունու շրջանի Մարգսաշեն գյուղի մերձակայքում տեղաբաշխված «Վարդանանք» մարզաառողջարարական ճամբարին, որը գործում էր նախորդ տարիներին, այս տարի կփոխարինի նույն շրջանի Ասանի դպրոցական ճամբարը՝ դարձյալ շուրջօրյա տիպով:

ԼՂՀ ԿՄՍ նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ Շավարշ Մարգսյանի խոսքերով, ամեն ինչ կարվի արցախցի մանուկների հանգիստն արդյունավետ անցկացնելու համար: Նրա տեղեկատվությամբ՝ Ասանի ճամբարը միաժամանակ կծառայի նաեւ ԼՂՀ-ում գործող տարբեր երիտասարդական կազմակերպությունների շուրջ 75 անդամների ամառային հանգիստը կազմակերպելու համար: Բացի այդ, արցախցի 15 շնորհալի երեխաներ կուղարկվեն ՀՀ Դիլիջանի «Բազե» ճամբար՝ այնտեղ իրենց հանգիստը վայելելու համար:

Ընդհանրապես, Շ. Մարգսյանի հավաստմամբ, ճամբարներում առաջին հերթին ընդգրկվել են զոհված ազատամարտիկների, երկկողմանի ծնողազուրկ, բազմանդամ եւ սակավակարող ընտանիքների 7-14 տարեկան երեխաները:

Այս տարվա ամռանը 1300 երեխաների համար Ստեփանակերտում եւ Շուշիում ճամբարներ կբացի նաեւ Հայ ավետարանչական ընկերակցությունը, որը կհոգա մանուկների ամառային հանգստի բոլոր ծախսերը:

Դպրոցական ճամբարները, մեր տվյալներով, կսկսեն գործել հուլիսի 15-ից:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Յրտահարություն՝ Գեղարքունիքի մարզում

ԳԱՎԱՌ, 25 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայհիդրոմետ» ծառայության Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման տվյալներով, 2003 թվականի հունիսի 24-ի լույս 25-ի գիշերը Գեղարքունիքի մարզի տարածքով մեկ հողի մակերեսին դիտվել է յրտահարություն: Գավառի տարածքում գրանցվել է -0.2, Մարտունու տարածքում՝ -1.1 աստիճան ցուրտ:

Գեղարքունիքի մարզպետարանի գյուղվարչությունում ստացված նախնական տեղեկությունների եւ տվյալների համաձայն, յրտահարությունից տուժել են մարզի բոլոր տարածքների կարտոֆիլի եւ բանջարաբոստանային այլ մշակաբույսերի ցանքերը: Նախնական հաշվարկներով, յրտահարվել է մոտ 9 հազար հեկտար կարտոֆիլի, 1200 հեկտար բանջարաբոստանային մշակաբույսերի ցանքեր: Գյուղատնտեսական ենթակայությունների ներկայացուցիչներն ասում են, որ մոտավոր հաշվարկներ դեռեւս չեն արվել, սակայն, ինչպես նշեցինք, ամենուր տուժել են կարտոֆիլի, բանջարեղենի, ինչպես նաեւ հացահատիկի ցանքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը ոռոգելի է, ուստի գյուղացիներն ակնկալում են, որ ոռոգման ջրի գինը կնվազեցվի: Ինչպես հայտնեցին գյուղատնտեսության նախարարությունից, ոռոգման ջրի գինը նվազեցնելու հարցը դրվել է կառավարության քննարկման:

ՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՐՔ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻՆ

Թուրք պատմագետների հերթական շոուն

«Ազգի» թղթակիցը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ խնդրանքով հանդիպեց նրա հետ: Հանդիպման առիթը Թուրքիայի պատմագիտական ընկերակցության նախագահ, պրոֆեսոր Յուսուֆ Հալաչօղլու հունիսի 10-ին Անկարայից նրան ուղարկած նամակն էր:

Նամակը պարունակում է հետեւյալ բովանդակությունը. «Հարգելի դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյան, արխիվային փաստաթղթերի համաձայն, հայկական բանդաները Կարսի մարզի Դերեյիկ գյուղում 1918 թ. սպանել են 360 մահմեդականի: Արխիվների եւ գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1918 թ. ապրիլի 15–16-ը 371 մահմեդականների, մեծ մասամբ կանանց եւ երեխաների, հավաքել են հարդանոցում եւ հրկիզել: Նրանցից 360-ը ոչնչացվել է եւ միայն 11-ին է հաջողվել փրկվել:

Այդ միջադեպի վայրը վերածվել է զանգվածային գերեզմանոցի, ինչը հայտնի է դարձել արխիվային հետազոտությունների հետեւանքով: Թուրքական պատմագիտական ընկերակցությունը 2003 թ. հունիսի 31-ից հուլիսի 1-ը սկսելու է այս զանգվածային գերեզմանոցի պեղումները:

Մենք ցանկանում ենք հրավիրել Ձեզ՝ վկա գտնվելու այս զանգվածային գերեզմանը բացելու աշխատանքներին: Այս առիթով մենք շնորհակալ կլինենք, եթե Դուք կարողանաք տեղյակ պահել մեզ Ձեր մասնակցության մտադրության մասին մինչեւ 2003 թ. հունիսի 20-ը:

Ձեր ապրուստի ծախսերը կհոգա Կարսի մեր ընկերակցությունը:

Անկեղծորեն Ձեր՝ Յուսուֆ Հալաչօղլու»:

Հունիսի 20-ին Լավրենտի Բարսեղյանը պատասխան նամակով դիմել է Թուրքական պատմագիտական նախագահին հետեւյալ բովանդակությամբ. «Հարգելի պրոֆեսոր, սացա Ձեր հրավերը՝ 2003 թ. հունիսի 30-ից հուլիսի 1-ը Կարսում լինելու մասին:

Ցավոք, չեմ կարող մասնակցել Ձեր եւ Կարսի նահանգի ղեկավարության կազմակերպած շոուին, որը կրկին վկայում է, որ Ձեր կառավարությունն ու թուրք պատմաբանները շարունակում են նենգափոխել պատմությունը եւ ճշմարտությունը:

Հավանաբար կազմակերպվող պեղումներին Դուք պետք է առաջին հերթին հրավիրեիք մասնագետ մարդաբանների, ովքեր կարող էին հավաստել, թե պեղումներից հանված նյութերը կարճագանգ կամ երկարագանգ ռասայի ներկայացուցիչներից որին են պատկանում:

Ես պատրաստվում եմ Ձեզ ավելի ընդարձակ բաց նամակ հղել, սակայն պարտքս եմ համարում թուրք պատմաբաններին հիշեցնել, որ 1918 թ. մարտի 12-ին թուրքական զորքերն Երզրումը գրավելուց հետո Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Կարս: Թուրքական բանակն ապրիլի 26-ին գրավեց Կարսը եւ շուրջ մեկ ամսվա ընթացքում, Երզրումից մինչեւ Կարս հասնելը, ողջ ճանապարհին ոչնչացնում էր հայ բնակչությանը: Զոհերի թիվը կազմեց մի քանի տասնյակ հազար հայ բնակիչ: Ի դեպ, միայն 1918–1920 թթ. ընթացքում, Արեւելյան Հայաստան կատարած թուրքական արշավանքների հետեւանքով, մի շարք բնակավայրերում թուրքերն իսպառ բնաջնջել են հայ բնակչությանը:

Այսօր էլ տարբեր բնակավայրերում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվում են զանգվածային թաղումների հետքեր, եւ եթե Դուք անձամբ ցանկություն ունեք ականատես լինելու խմբակային թաղումների գերեզմանների բացմանը, ապա ես սիրով հրավիրում եմ Ձեզ եւ ինձ վրա եմ վերցնում Հայաստանում գտնվելու հետ կապված ձեր բոլոր ծախսերը:

Խնդրում եմ սպասել իմ հաջորդ գրությանը:

Հարգանքներով՝ Լավրենտի Բարսեղյան»:

Թերթի թղթակցին Լ. Բարսեղյանը հայտնեց, որ Թուրքական պատմագիտական ընկերակցության վերոհիշյալ գրությունը ընկերակցության ղեկավարությունն ուղարկել է տարբեր երկրներում բնակվող այն հայ գիտնականներին, ովքեր զբաղվում են Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներով:

Լավրենտի Բարսեղյանը միաժամանակ իր զարմանքը հայտնեց՝ նկատի ունենալով այն փաստը, որ դեռեւս երկու տարի առաջ Թուրքիայի արտաքին գործերի գերատեսչությունը պաշտոնապես նրան մերժեց Թուրքիա մտնել՝ Անկարայի համալսարանում հրավիրված գիտաժողովին մասնակցելու համար:

Լ. Բարսեղյանի նկատմամբ թուրքական հեռուստատեսության եւ լրատվության միջոցների բազմաթիվ հարձակումները, ինչպես ենթադրում է պրն Բարսեղյանը, դժվար թե այս անգամ եւս նրան թույլատրեին անցնել թուրքական սահմանը:

Ընթերցողներին հավանաբար կհետաքրքրի այն փաստը, որ ընդամենը վերջերս՝ այս տարվա ապրիլի 23-ին, երբ թուրքական հեռուստատեսությունը թուրք հասարակայնության դատին ներկայացրեց թուրք-հայկական հարաբերություններին նվիրված բազմասերիանոց տեսաֆիլմի առաջին մասը, Լ. Բարսեղյանին, որի հարցազրույցը տեսագրել էին թուրք հեռուստալրագրողները, ներկայացրին որպես ժամանակի նշանավոր ահաբեկչի: Սակայն նրանք չբավարարվեցին դրանով: Նույն հեռուստաֆիլմի մեկ այլ մասում, աղավաղելով Լ. Բարսեղյանի հարցազրույցի բովանդակությունը, որտեղ հարց էր բարձրացվում Հայոց ցեղասպանության հետեւանքով հայ ժողովրդի կրած նյութական վնասների փոխհատուցման պահանջների մասին, ֆիլմի թուրք մեկնաբանն էկրանից հայտարարեց, թե Լ. Բարսեղյանը թուրքական կողմին առաջարկում է վճարել 80 միլիարդ ամերիկյան դոլար կազմող գումարը եւ դրանով փակել Հայոց ցեղասպանության վերաբերյալ բոլոր խոսակցությունները: Լ. Բարսեղյանը ներկայումս ի մի է բերում 1918–20 թթ. ընթացքում Հայաստանի առաջին հանրապետության տարածքում ֆեմալական արշավանքների հետեւանքով առանձին բնակավայրերում (Ազոցքի, Արթիկի, Սպիտակի, Գյումրու եւ այլ տարածաշրջաններում) հայ բնակչության նկատմամբ ձեռնարկված զանգվածային ոչնչացմանը վերաբերող նյութերը, որոնք կրկին հաստատում են այն իրողությունը, որ երիտթուրքերի իշխանության անկումից հետո էլ թուրք կառավարիչները ժառանգել են ու շարունակել զարգացնել պետականորեն ծրագրված Հայոց ցեղասպանությունը:

Սփյուռքի հետ երկխոսությունը բխում է Թուրքիայի շահերից

Ամերիկահայ կազմակերպությունները հանդիպելով Թեզջանին՝ նպաստում են այդ շահերին

Հայաստանի հետ հարաբերությունների «բարելավման» Թուրքիայի յուրաքանչյուր նախաձեռնություն, անկախ պատրանքայնությունից, բուռն հակազդեցություն է առաջացնում Ադրբեջանում: Այդ առումով բացառություն չէին արցգործնախարար եւ փոխվարչապետ Աբդուլլահ Գյուլի «պահանջատիրությունից պաշտոնապես հրաժարվելու դեպքում Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու Թուրքիայի պատրաստակամության» մասին հայտարարությունը եւ Մադրիդում նրա հանդիպումը ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանի հետ:

Նույնը վերաբերում է սփյուռքի հետ Թուրքիայի այսպես կոչված երկխոսություն հաստատելու պետական առաջադրանքով արտգործնախարարության հետախուզության եւ հետազոտության բաժնի աշխատակից Քադրի Էջվեթ Թեզջանի գործուղմանը Մ. Նահանգներ, որտեղ Ամերիկայի հայկական համագումարը եւ Ռամկավար Ազատական կուսակցության ղեկավարները, արձագանքելով հրավերին, նրա հետ հանդիպել էին ՄԱԿ-ում Թուրքիայի ներկայացուցչությունում: Դրան էր հետեւել Հայկական բարեգործական ընդհանուր միության, Հայ առաքելական եկեղեցու Արեւմտյան թեմի եւ վերը նշված համագումարի ներկայացուցիչների հանդիպումը Թեզջանի հետ, որը տեղի էր ունեցել Կալիֆոռնիայի թուրքական գլխավոր հյուպատոսարանի հրավերով:

«Ազգը» հունիսի 18-ի համարում, անդրադառնալով սփյուռքի հետ երկխոսության վերոհիշյալ նախաձեռնությանը, միանգամայն անտրամաբանական էր համարել թուրքական պետության ներկայացուցչի հետ հենց Թուրքիայի ներկայացուցչության գրասենյակում հանդիպելու ինչպես Հայկական համագումարի, այնպես էլ ՌԱԿ-ի ղեկավարության արարքը, մասնանշելով. «Երբ հանդիպման վայրը նախանշում է առաջարկող կողմը, ապա այդ հանդիպումը վերածվում է ընդունելության: Այդ ընթացքում հանդիպման առաջարկն ինքնաբերաբար հրավեր է դառնում»:

Ակնհայտ է, որ հրավերին ցուցաբերվող արձագանքը որպես ընդունելության արժանանալու միջոց, եթե համագործակցության պատրաստակամություն չի ենթադրում, ապա որպես այդպիսին ներկայացնելու առիթ է տալիս թուրքերին: Ցավոք, Թեզջանի հետ հանդիպելով թուրքական հյուպատոսարանում, ՀԲԸՄ Միությունն ու Արեւմտյան թեմը կրկնել են համագումարի ու ՌԱԿ-ի սխալը, թերեւս դրանով էլ կամա թե ակամա սփյուռքի հետ այսպես կոչված երկխոսություն հաստատելու առումով թուրքական պետության նախաձեռնությանը ընդառաջելու պատրաստակամություն են հայտնել:

Հարցը, սակայն, սոսկ նախաձեռնությունը չէ, այլ դրա ներառումն անմիջականորեն հայաստանյան իշխանությունների իրավասությանը ենթակա այնպիսի քաղաքական խնդիրների, ինչպիսիք են Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, շրջափակման վերացումը, սահմանների վերաբացումը, ինչպես նաեւ ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը: Ուրեմն, վերոհիշյալ հայկական կազմակերպությունները՝ նախաձեռնության առումով, թուրքական պետությանն ընդառաջելու պատրաստակամություն հայտնելիս ինքնակամ հայտնվել են նաեւ նրան ընդառաջելու պարտավորության տակ այն հարցերի շուրջ, որոնք ներառում է խնդրո առարկա նախաձեռնությունը:

Մինչդեռ, Ամերիկայի հայկական կազմակերպությունները, չհաշված բարոյականը, որեւէ այլ պատասխանատվություն Հայաստանի համար չեն կրում: Ուրեմն, նրանց պատրաստակամությունը պետք է վերագրել Ամերիկայի քաղաքացիությունից բխող պարտականության կամ համարել ԱՄՆ պետքարտուղարությանը ծառայություն մատուցելու պարտավորություն: Որքան էլ դա կազմակերպությունների արարքը չարդարացնի, այնուամենայնիվ, հասկանալի է դարձնում: Թերեւս անհասկանալին Թուրքիայի արտգործնախարարության հետախուզության եւ հետազոտության բաժնի աշխատակից Թեզջանի հետ Կալիֆոռնիայի թուրքական հյուպատոսարանում հանդիպելու հրավերին Հայ առաքելական եկեղեցու Արեւմտյան թեմի արձագանքներն էին:

Այդ առումով ավելի քան անհասկանալի է Թեզջանի հետ եկեղեցական գործունեությանը միանգամայն անհարիր զուտ քաղաքական հարցերի քննարկումը: Թվում էր, թե Արեւմտյան թեմն անմիջականորեն ենթարկվելով Մայր աթոռ Սբ. Էջմիածնին, ԱՄՆ-ի քաղաքացիությամբ եւ պետքարտուղարությամբ պայմանավորված որեւէ պարտավորություն չպետք է ունենա: Ի դեպ, անցյալ տարվա վերջերին, երբ Պոլսո հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մութաֆյանը Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության օգտին լոբբիստական գործունեություն ծավալելու նպատակով շրջագայեց եվրոպական երկրներով, իր բոլոր հանդիպումներն անխտիր եվրոպացի գործիչների եւ օտարերկրյա լրագրողների հետ կազմակերպում էր տվյալ երկրի թուրքական դեսպանատանը:

Այս ամենից հետո մնում է ավելացնել, որ Ամերիկայի հայկական համագումարը, ՌԱԿ-ը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը եւ Հայ առաքելական եկեղեցու Արեւմտյան թեմը, Թեզջանին հանդիպելու միջոցով սփյուռքի հետ երկխոսության Թուրքիայի նախաձեռնությանը կամա թե ակամա ընդառաջելիս, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ամենեւին չեն նպաստում: Բայց որ շնորհիվ դրա Թուրքիան քողարկում է երկխոսության պատրանքայնությունը՝ ակնհայտ է: Ուրեմն նրանք վերոհիշյալ ընդառաջումով նախադրյալներ են ստեղծում, որ երկխոսությունն իրականի հնչեղություն ունենա:

Քանի որ պատրանքային երկխոսությունը հակազդեցություն չի ենթադրում, իսկ Ադրբեջանը բուռն կերպով շարունակում է հակազդել դրան, ուստի հնչեղության առումով այդ հակազդեցությունը հանգեցնում է նույն արդյունքի, ինչ հայկական կազմակերպությունների ընդառաջումը: Այլ կերպ, սփյուռքի հետ Թուրքիայի երկխոսության պատրանքային բնույթը քողարկելու առումով ամերիկահայ կազմակերպությունները ցանկություններին հակառակ օգնում են ադրբեջանցիներին: Այն տարբերությամբ, որ եթե վերջիններս հակազդեցությունը նախապես համաձայնեցնում են թուրքական իշխանությունների հետ, ապա կազմակերպությունները տուրք են տալիս հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը սեփական շահերին ծառայեցնելու պաշտոնական Վաշինգտոնի միտումներին:

Դա, ինչ խոսք, անհամեմատ սահմանափակում է ինչպես սփյուռքի հետ երկխոսության, այնպես էլ Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման թուրքական նախաձեռնությունների բուն էությունը բացահայտելու հայկական իշխանությունների հնարավորությունները: Այս պայմաններում նախաձեռնությունները, որպես ճնշման հավելյալ միջոց, անխուսափելիորեն անդրադառնում են նրա վրա, իսկ դրանց ձախողման պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի վրա:

ՎԱՀԱՆ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքական կառավարությունը երկրի տարածքը բացեց դաշնակից ուժերի համար

Սկիզբը՝ էջ 1

Ուրեմն, թուրք-ամերիկյան տարաձայնությունները, որոնցով թերեւս կանխորոշվում էր ԱՄՆ-ի միջինարեւելյան քաղաքականությունում Թուրքիայի նոր դերը, կարեւոր էին ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանում նրա բարեկամ երկրների՝ Սիրիայի ու Իրանի համար: Այն առումով, որ դրանց խորացումն ԱՄՆ-ին զրկում էր Սիրիայի ու Իրանի դեմ Թուրքիայի հետ համագործակցելու հնարավորությունից: Այս պայմաններում անհամեմատ նվազում էր վերջինի դերը տարածաշրջանում, ինչը եւ անխուսափելի էր դարձնում նրա դերի նվազումը ԱՄՆ-ի անդրկովկասյան քաղաքականությունում: Այս պայմաններում Վաշինգտոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար Հայաստանի վրա ճնշում գործադրելու փոխարեն նախապայմաններից հրաժարվելու պահանջով կդիմեր Թուրքիային: Այսպիսով, թուրքական իշխանությունները կկանգնեին Հայաստանի հետ հարաբերությունների նախապայմաններով ծախողման պատասխանատվությունն սանձնելու փաստի առջեւ:

Թուրքիայի արտգործնախարարության խորհրդական Ուղուր Չիյալի գործուղումը Վաշինգտոն ցույց տվեց, որ թուրքական իշխանությունները եւս գիտակցել են տարաձայնությունների միջոցով Վաշինգտոնին հակադրվելու անհեռանկարայնությունը: Ի վերջո, նրանք տեղի տվեցին, ինչն արտահայտվեց Սիրիայի եւ Իրանի դեմ ԱՄՆ-ի հետ համագործակցելու Թուրքիայի պատրաստակամությամբ: Այլ կերպ, այցի ընթացքում նախ հունի մեջ մտան թուրք-ամերիկյան հարաբերությունները, ապա հարթվեցին տարաձայնությունները:

«Ազգը» հունիսի 19-ի եւ 24-ի համարներում արձագանքեց Չիյալի այցին: Թեեւ նա հունիսի 20-ին վերադարձել է Անկարա, սակայն թուրքական թերթերն ու հանրային հեռուստատեսությունն առ այսօր շարունակում են արձագանքել: Սա ցույց է տալիս, թե Թուրքիայում ինչպիսի կարեւոր նշանակություն են տալիս ԱՄՆ-ի հետ տարաձայնությունների հաղթահարմանը: Ինչ վերաբերում է Վաշինգտոնին, ապա նրա տեսանկյունից էլ կարեւորը ներկայացված պահանջների կատարման պատրաստակամությամբ ընդառաջումն է: Ըստ երեւույթին, թուրքական կառավարությանը հաջողվել է հաղթահարել պատրաստակամության այդ խնդիրը, որ նա նախարարների խորհրդի հունիսի 24-ի նիստում «Թուրքիայի օդային տարածքը, օդանավակայանները, ռազմաբազաները եւ նավահանգիստները դաշնակից երկրների զինված ուժերի առջեւ բացելու մասին» որոշում է ընդունել:

Թուրքական թերթերը հունիսի 25-ի համարներում կառավարական այս որոշման ընդունումը պայմանավորելով Չիյալի Վաշինգտոն կատարած այցով, ոգեւորությամբ հայտարարեցին «ԱՄՆ-ի հետ Թուրքիայի ռազմավարական դաշինքի վերականգնման մասին»: Այդ ընթացքում թուրքական հեռուստատեսությունը որոշման առնչությամբ պարզաբանումների համար դիմեց արտգործնախարար Աբդուլլահ Գյուլին, որն էլ մասնավորապես ասաց. «Կառավարական այս որոշումը Թուրքիայի տարածքն օգտագործելու իրավունք է տրամադրում ոչ միայն ԱՄՆ-ին, այլեւ դաշնակից բոլոր երկրներին: Դրա նպատակն Իրաքի վերակառուցմանն ու ներքաղաքական կայունացմանը նպաստելն է»:

Քանի որ խոսքը տվյալ դեպքում ոչ թե երկրների, այլ նրանց զինված ուժերի Թուրքիայի տարածքում տեղակայելու մասին է, ուստի հարց է ծագում՝ արդյոք կառավարությունը չի՞ շրջանցում Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ Մեջլիսին: Այդ հարցին Գյուլը պատասխանեց. «Գործող սահմանադրությունն առանց Մեջլիսի քննարկման այսպիսի որոշում ընդունելու հնարավորություն է տալիս մեզ»: Մինչդեռ հակաիրաքյան պատերազմի նախօրյակին այդ նույն կառավարությունը «Երկրի տարածքում ամերիկյան զորքերի տեղակայման մասին» օրինագիծը միեւնույն սահմանադրության պատճառաբանությամբ հարկ էր համարել ներկայացնել Մեջլիսի քննարկմանը:

Ինչպես հայտնի է մարտի 1-ի նիստում օրինագիծը մերժվել էր: Դրան էր հետեւել «Ինջիռլիքի» ռազմաբազայի փակումը, որը դեռեւս 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի ավարտին Հյուսիսային Իրաքում հետախուզական թռիչքների համար տրամադրվել էր հակաիրաքյան կոալիցիայի ռազմաօդային ուժերին:

Համենայն դեպս, «Թուրքիայի օդային տարածքը, օդանավակայանները, ռազմաբազաները եւ նավահանգիստները դաշնակիցների առջեւ բացելու մասին» կառավարական որոշումը հունիսի 25-ին ներկայացվել էր նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի վավերացմանը: Առաջին փուլում բացվում են «Ինջիռլիքի» եւ Ստամբուլի մոտակայքում տեղակայված Քեմալ Աթաթուրքի հոգեւոր դուստր, Թուրքիայի առաջին կին օդաչու Սաբիհա Գյոքչենի անվան ռազմաբազաները: Մնացածների մասին, ինչպես նշեց Գյուլը, որոշում կայացնելու իրավունքը վերապահվում է թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբին:

Ամենայն հավանականությամբ, գլխավոր շտաբն էլ այդ իրավունքը կվերապահի Վաշինգտոնին: Թեեւ վերջինը նոր բազայի որեւէ պահանջ դեռեւս չի ներկայացրել, բայց Թուրքիայից հիասթափության վերաբերյալ հայտարարություններով նպատակին հասել է: Ուրեմն որքան էլ Աբդուլլահ Գյուլը մերժի, Թուրքիան Սիրիայի եւ Իրանի դեմ սերտորեն կհամագործակցի ԱՄՆ-ի հետ, թերեւս համագործակցության ընթացքն էլ կպայմանավորի նոր բազաների բացումը:

ԱՄՆ-ը կարող էր բեն Լադենին պատանել սեպտեմբերի 11-ից առաջ

Երբ 2001 թ. հունվարին Ջորջ Բուշը դարձավ ԱՄՆ նախագահ, Աֆղանստանի տարածքի վրայով թռչող ամերիկյան «Պրեդատոր» անօդաչու հետախուզական ինքնաթիռներն արդեն առնվազն երեք անգամ հայտնաբերել էին թիվ 1 ահաբեկիչ Ուսամա բեն Լադենի գտնվելու վայրը: Այդ մասին տեղեկացնում է Աստիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով նախագահական վարչակազմի լավատեղյակ աղբյուրներ:

Անօդաչու լրտեսական օդանավեր օգտագործելու գաղափարը ծնունդ էր առել դեռ Բիլ Քլինթոնի նախագահության տարիներին: Դրանց կիրառումը նախատեսված էր հակաահաբեկչական պայքարի փորձագետ Ռիչարդ Քլարկի կազմած ծրագրում: Սակայն որոշվել էր 2000 թ. ծնունդ առած գաղափարի կենսագործումը թողնել Բուշի վարչակազմին:

«Ալ Ղաիդայի» առաջնորդին ոչնչացնելու նպատակով որոշված էր «Պրեդատորները» զինել հրթռային համակարգերով, բայց նախքան 2001 թ. սեպտեմբերի 11-ը դա չէր արվել: Դրանից մեկ ամիս առաջ Պենտագոնը եւ ամերիկացի հետախույզներն առնվազն 3 անգամ փորձարկել էին հրթիռներով զինված «Պրեդատորներ»:

Իսկ սեպտեմբերյան ահաբեկչություններից հետո մի քանի օրվա ընթացքում անօդաչու ինքնաթիռները հանդերձավորվեցին հրթիռներով եւ հանձնվեցին ամերիկյան հատուկ ջոկատների տնօրինությանը: Դեռ նախքան Աֆղանստանի պատերազմը դրանք մարտական առաջադրանքներ էին կատարում: Օրինակ, 2001 թ. նոյեմբերին նման մի օդանավ օգտագործվեց բեն Լադենի զինվորական խորհրդական Մոհամմեդ Ատֆֆի սպանության նպատակով:

TBC-ի փակումը դեմ է խոսքի ազատությանը

Դատապարտման արշավներ նաեւ արտասահմանում...

Ռուսական TBC հեռուստաալիքի փակման կապակցությամբ երեկ խոր ափսոսանք է հայտնել Ս. Նահանգների պետդեպարտամենտը: Վերջինիս պատասխանատու ներկայացուցիչ Ֆիլիպ Ռիկերը հայտնել է, որ նման երեւույթը խոսում է Ռուսաստանում խոսքի ազատության հեռանկարի մասին: «Արդեն երկար ժամանակ նկատելի են բացահայտ ճնշումներ ռուսական անկախ լրատվամիջոցների վրա» ասել է նա: Նրա դիտարկմամբ, քաղաքական նույն շարժառիթներով էին պայմանավորված ՀՌԲ եւ ՏԲ-6 հեռուստաալիքներում տեղի ունեցած նմանատիպ դեպքերը, եւ TBC-ի փակումը դրանց անմիջական շարունակությունն է:

Ռուսական «Մեդիա սոցիում» կազմակերպության նախագահ Օլեգ Կիսելյովը, որը նաեւ TBC հեռուստաալիքի հեռարձակման արտոնագրի տերն ու ղեկավարն էր, հայտարարել է, որ հեռուստաալիքը փակելով՝ մամուլի եւ գրահրատարակչության նախարարը կոպտորեն խախտել է օրենքը: Կիսելյովը պնդել է, որ փոխհատուցման իրենց իրավական պահանջները չբավարարելու դեպքում ինքը անպայմանորեն կդիմի դատարան:

Այդուհանդերձ, նախարարության որոշումը բողոքարկելու որեւէ ցանկություն լրագրողներն ու հեռուստաալիքի ղեկավարներն առայժմ չունեն:

BBC-ի հետ հարցազրույցում հեռուստաալիքի գլխավոր խմբագիր Եվգենի Կիսելյովը նշել է, որ Ռուսաստանի ղեկավարները փակեցին իրենց բերանը, քանի որ այնպիսի անարգելք եւ ազատ հեռուստաժուռնալիստիկա, ինչպես իրենցն էր՝ նրանց պետք չէր: Դա նրանց խորապես զայրացնում էր եւ բնավ ձեռնտու չէր:

Եվգենի Կիսելյովը մտադիր է թողնել հեռուստալրագրողի աշխատանքը եւ զբաղվել քաղաքականությամբ: TBC-ի հայտնի լրագրողներ Վիկտոր Շենդերովիչն ու Վլադիմիր Կարա Մուրզան նույնպես որոշել են թողնել աշխատանքը հեռուստատեսությունում:

Ռ. Պ.

ԳԱՂՏԻ ՀԱՎԱՔ ԲՈՍՆԻԱՅՈՒՄ

Միջազգային ահաբեկիչները պատերազմ են հայտարարել «եվրոպական ռասային»

Սարաեւոյից (Բոսնիա) ոչ հեռու գտնվող լեռնային մի գյուղում օրերս հանդիպում են ունեցել միջազգային ահաբեկչության 150 առաջնորդներ իսլամական 50 երկրներից: «Պանորամա» թերթի տվյալներով, մասնավորապես ներկա են եղել «Ալ Ղաիդայի», «Իսլամական ջիհադի», «Համասի», «Հզբոլլահի», «Մուսուլման եղբայրների», «Ակտիվ իսլամական երիտասարդության» պատվիրակները: Հանդիպման ավարտին սրբազան պատերազմ՝ ջիհադ է հայտարարվել «եվրոպական ռասային»:

Հանդիպման մասին առաջինն իմացել եւ տագնապ էր հնչեցրել բրիտանական «Տեյլս» հետազոտական խումբը: ՆԱՏՕ-ին խմբի ուղարկած զեկուցագրում օգտագործվել են Ռուսաստանի, Սերբիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի եւ Իտալիայի հետախուզություններից ստացված տվյալներ: Փաստաթղթում նշվում է, որ ոչ միայն Բոսնիան, այլեւ Բալկանների ամբողջ շրջանը «դարձել են ամենամեծ սպառնալիքը եվրոպայի անվտանգության համար»:

Էթնիկական, կրոնական եւ քաղաքական բազմաթիվ հակամարտություններով լի այդ շրջանից իսլամական ինտերնացիոնալի մարտիկները Ուսամա բեն Լադենի գլխավորությամբ կարող են նոր ահաբեկչություններ ծեռնարկել սեպտեմբերի 11-ի ոգով: Ավելին, բալկանյան մաֆիական հանցախմբերի համաձայնությամբ «Ալ Ղաիդան» կարող է զենքի, թմրադեղերի եւ մարդկանց անօրինական փոխադրումների ուղիներն օգտագործել «կեղտոտ» ատոմային ռումբն Արեւմուտք անցկացնելու համար:

Բալկաններում իսլամիստ ահաբեկիչների հարաճուն ներկայության դեմն առնելու նպատակով Օխրիդում (Մակեդոնիա) տարածաշրջանի կառավարությունների ղեկավարները եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջորջ Ռոբերտսոնը որոշել են ուժեղացնել սահմանային վերահսկողությունը, առաջին հերթին՝ Սերբիա-Չեռնոգորիայի շուրջը:

Իրաքում բրիտանացի 6 զինվոր է սպանվել

Իրաքի պատերազմի ավարտից հետո առաջին անգամ այդ երկրում բրիտանացի զինծառայողներ են սպանվել: Մաջարա քաղաքի շիա համայնքի ներկայացուցիչները Ռոյթեր գործակալությանը հայտարարել են, որ նրանք քամահրել էին իսլամական ավանդույթները եւ «մահու չափ ծանծրացրել էին իրենց խուզարկություններով»:

Վերջին երկու օրերին Մաջարայի զայրացած բնակիչները բողոքի ցույցեր էին անում քաղաքում «զսումներ» անցկացնող բրիտանացիների դեմ: Երեքշաբթի օրը վերջիններս պլաստիկե փամփուշտներ օգտագործեցին հերթական ցույցը ցրելու համար: Դրա հետեւանքով զոհվեցին 2 խաղաղ բնակիչներ: Այդ միջադեպը լցրեց շիա մահմեդականների համբերության բաժակը:

Զինվորների վրա կրակ բացվեց AK-47 ավտոմատներից: Տեղում զոհվեցին 6 բրիտանացիներ:

«Զինվորներն իրենց շներով խուզում են մեր տները եւ ավտոմատները պահում մեր կանանց եւ երեխաների վրա: Որպես մահմեդականներ, չենք կարող թույլ տալ, որ ոտները մտնեն մեր տներ», ասել է ցույցի մասնակիցներից մեկը: Բնակիչները նաեւ ասել են, որ անգլիացիները խուզարկելիս պահարաններից հանել են կանանց սպիտակեղենը եւ ամենի ներկայությամբ ծաղրել դրա չափերը:



Մաջարայի բնակիչները որոշել են անգլիացի զինվորներին այլեւս չթողնել իրենց քաղաք: «Եթե նրանք վերադառնան, մենք նրանց կդիմավորենք զենքով», ասել են իրաքցիները:

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար Ջեֆրի Հունը հայտարարել է, որ կառավարությունը քննության է առնում հավելյալ ուժեր Իրաք ուղարկելու հարցը:

Ձերբակալվել է Իրաքի տեղեկատվության նախկին նախարարը

Ռոյթեր գործակալության տվյալներով, լույս երեքշաբթի գիշերը Բաղդադի մերձակա անցակետերից մեկում ձերբակալվել է Իրաքի տեղեկատվության նախկին նախարար Մոհամմեդ Սայիդ աս Սահֆը: Ընդսմին Ռոյթերը վկայակոչում է անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերի շտաբի պաշտոնից մեկի խոսքերը:

Իրաքի պատերազմի օրերին Մոհամմեդ Սայիդ աս Սահֆն ամեն օր մամլո ասուլիսներ էր կազմակերպում, դրանց ընթացքում զեկուցում իրաքցիների «հաղթանակների» մասին եւ խոսանում ամենասեղմ ժամկետներում ջախջախել անգլո-ամերիկյան ուժերին: Այդ պատճառով ամերիկյան մամուլում նա սացել էր «կատակերգու Ալի» մականունը: Արեւմուտքում նրա կերպարն այնքան հայտնի էր դարձել, որ սկսել էին օգտագործել գովազդային նպատակներով, խաղալիքների արտադրության մեջ:

Հաղորդվում է, որ նախկին նախարարը Բաղդադի անկումից հետո թաքնված է եղել իր ազգականներից մեկի տանը եւ դրսի անցուդարձին տեղեկացել է արբանյակային անտենայով:

Բաղդադի անկման օրը՝ ապրիլի 9-ին, իրանա-իրաքյան սահմանի մոտ հայտնված իրաքցի փախստականները լրագրողներին ասել էին, թե աս Սահֆն ինքնասպանություն է գործել: Դա հիմք ընդունելով, ամերիկացիները նրա անունը չէին մտցրել փնտրվող իրաքցի 55 բարձրաստիճան պաշտոնյաների ցանկում:

Բայց հետագայում լուրեր էին ստացվել, թե տեղեկատվության նախարարը ողջ է եւ թաքնվում է Իրաքի հյուսիսում: Մոհամմեդ Սայիդ աս Սահֆը վերջին անգամ հանրության առջեւ երեւացել էր ապրիլի 8-ին, Բաղդադի «Պալեստին» հյուրանոցում: Այդ օրն ամերիկյան տանկի արկերից հյուրանոցում զոհվել էին 2 եւ վիրավորվել 3 օտարերկրացի լրագրողներ:

Պ. Ք.

Մշակույթ

Սերո Խանզադյանի կտակը

Տինգ տարի առաջ այսօր վախճանվեց Սերո Խանզադյանը՝ «Մխիթար Սպարապետ» եւ «Հողը» «Թագուհին հայոց» ու «Մեր գնդի մարդիկ» վեպերի, «Հայրենապատում» պատմահրապարակախոսական բազմահատոր ստեղծագործությունների եւ ճակատային հուշավեպերի հեղինակը: Հինգ տարի առաջ հեռացավ նա մեզանից, թողնելով ոչ միայն լավ գրքեր, արժեքավոր գրականություն, այլեւ բարի հիշատակ: Սերո Խանզադյանի անվան հետ սերտորեն կապված է դարաբաղյան շարժման պատմությունն ու ճակատագիրը: Երկար տարիներ նա ղեկավարել է Հայաստանի գրողների միության սկզբնական կուսակազմակերպությունը եւ կուսակցական գրեթե բոլոր ժողովները Սերո Նիկոլաեւիչը վեր էր ածում մի յուրօրինակ միտինգի, որը համարձակորեն կարելի է ասել, թե նախակարապետը դարձավ Ստեփանակերտի ու Երեւանի կենտրոնական հրապարակներում հետագայում տեղի ունեցող ապագա համաժողովրդական ցույցերի:

1977 թվականին լույս տեսավ «Պրոբլեմի միրա ի սոցիալիզմա» ամսագրի՝ մոլորակի կոմունիստական ու աշխատավորական կուսակցությունների տեսական ու տեղեկատվական հրատարակության վեցերորդ գիրքը: Այդ ամսագիրը հրատարակվում է 32 լեզուներով, աշխարհի 145 երկրներում (ահա թե, ամեն ինչից բացի, ուր էին գնում ԽՍՄԿԿ-ի փողերը): Այդ համարում հարցազրույց էր տպագրվել ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Բ. Կեւորկովի հետ: Զրույցը վարում էին Ս. Միրսան եւ Ա. Խաբան: Այն հարցին, թե «Լեռնային Ղարաբաղը ինչո՞ւ է գտնվում Ադրբեջանի կազմում եւ ոչ թե Հայկական ԽՍՀ-ի, որից այն բաժանված է մի նեղլիկ հողաշերտով», Կեւորկովը պատասխանել էր. «Մարզը Հայաստանից բաժանված է բարձր սարերով»: Այնտեղ ուրիշ գոհարներ էլ կային, այդ թվում նաեւ՝ Ալիեւից մի մեջբերում. «Ղարաբաղը ծաղկել է Ադրբեջանի կազմում: Եվ միայն ազգայնամոլները կարող են ասել. «Թող ես վաս ապրեմ, բայց կապված լինեմ Հայաստանի հետ»: Ընդ որում, այդ նյութը փարիսեցիաբար վերնագրված էր. «Մենք տեսանք ազգերի եղբայրությունը»:



Այսօր երեւի էլեն են հիշում, թե Սերոն ինչպիսի նրբությամբ ու սրամտորեն էր օգտագործում նման բնույթի վայրի «արգումենտները» Բրեժնեւին հասցեագրված իր հեռագրերում. «Թանկագին Լեոնիդ Իլյիչ, պատկերացրեք, եթե Ճապոնիան ու Չինաստանը հավակնեին Սիբիրի ու Հեռավոր Արեւելքի բուն ռուսական հողերին միայն այն պատճառով, որ այդ տարածքները Ռուսաստանի կենտրոնական մասից բաժանված են Ուրալյան բարձր լեռնաշղթայով...»: Մեկ այլ հեռագրում մի այսպիսի արտահայտություն կար. «Թանկագին Լեոնիդ Իլյիչ, խանական թվականներին «Պրավդան» եւ «Իզվեստիան» նույնպես գրում էին, թե Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում «տեսել են ազգերի եղբայրությունը»: Այսօր այնտեղ այլեւս հայ եղբայրներ չկան...»:

Ամբողջ հանրապետությունը տարակուսել էր «Պրոբլեմի միրա ի սոցիալիզմա» ամսագրում տպագրված հոդվածի առնչությամբ: Եվ շուտով Բեյրութի «Զարթօնք» օրաթերթում (ՌԱԿ կենտրոնական պաշտոնաթերթ) տպագրվեց Սերո Խանզադյանի բաց նամակը՝ ուղղված ԽՍՄԿԿ Կ-ի գլխավոր քարտուղարին: Նամակի արձագանքները եւ մեկնաբանությունները կես տարի շարունակ մեզ էին հասնում ոչ միայն լրագրերի, այլեւ գրեթե ամեն օր՝ «Ամերիկայի ձայն» եւ «Ազատություն» ռադիոկայանների միջոցով:

Իր բազմաթիվ գործընկերների հետ Սերո Նիկոլաեւիչն ակտիվորեն ու կրքոտությամբ հասարակական կարծիք էր ստեղծում դարաբաղյան շարժում սկսելու անհրաժեշտության մասին: Նրա ողջ ստեղծագործությունները կոչ էին հանուն հայրենիքի ազատության ու անկախության:

Չնայած «Սպարապետի» հեղինակը մահանում էր տանջալիորեն երկար, այնուամենայնիվ, հատկապես վախճանի նախօրեին նա համառորեն պնդում էր, որ ինքը երջանիկ մարդ է, քանզի, ինչպես բազմիցս կրկնում էր, ապրեց մինչեւ Շուշիի ազատագրումը, որի մասին էր նրա վերջին գիրքը:

Մահացող վարպետին ես հաճախ էի այցելում, իսկ նրա ամենավերջին օրերին՝ գրեթե ամեն օր: Եվ երբեք չեմ մոռանա, թե ծանր ընչաքաղությամբ ծերուկը, հազիվ շարժելով շրթունքները, ինչպես խնդրեց ինձ իր մոտ տանել Հայաստանի եւ Արցախի քարտեզները: Քիչ սպասելուց հետո ավելացրեց. «Ուզում եմ քարտեզի վրա ցույց տալ, որ եթե մենք ազատագրված հողերից թեկուզ մի թիզ էլ զիջենք, հետո այլեւս չենք կարող պահել ո՛չ Արցախը, ո՛չ Զանգեզուրը: Դա չի՛ կարելի անել: Դա իմ կտակն է»: Ես նայում էի մեռնող մարգարեին եւ հոգատանում մեր երկարամյա բարեկամությամբ: Դրանք մեր ընկերության վերջին տարիներն էին: Աչքերը գունաթափվել էին, այտերը ներս ընկել, մազերը վաղուց խուզված չէին, մորուքը զգզվել էր, ընչացքը դեղնել անընդմեջ ծխելուց:

Արցախի եւ Հայաստանի քարտեզը ես չհասցրի տանել նրան: Երեկոյան տիկին Ժենյան զանգեց եւ հայտնեց, որ Սերոյի սիրտը կանգ առավ: Ես անմիջապես գնացի Նորք՝ մտածելով մարգարեի կտակի մասին:

ՀՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

Հարգանքի տուրք խանդակաղործ Բենիկ Պետրոսյանի հիշատակին

Ուղիղ 7 տարի է մեզ բաժանում մանր խանդակի մեծ վարպետ Բենիկ Պետրոսյանի մահվան օրվանից: Սակայն նրա թողած ժառանգությունը դեռ շատ ու շատ սերունդների համար կդառնա ուղեցույց... Նա հաճախ էր կրկնում. «Ունենք միջնադարյան մանրանկարչություն, ինչու չունենանք նաեւ մանրաքանդակի դպրոց: Անչափ կուզեի, որ Երեւանում բացվի մանրաքանդակի միջազգային կենտրոն, եւ թող ստեղծագործական ժառանգությունս հիմք ծառայի հետագայի համար»: Վաղամեռիկ արվեստագետը չտեսավ իր երազածը, սակայն նրա արվեստով հիացած ու ոգեշնչվածներ եղան ու ձեռք մեկնեցին, աջակցեցին, եւ այսօր, Երեւանի կենտրոնում, Հանրապետության 38 հասցեում արդեն գործում է Բենիկ Պետրոսյանի թանգարանը: Մայիսի 28-ին թանգարանի բացման կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց վարչապետ Անդրանիկ Մարգարյանին որպես երախտագիտություն՝ թանգարանի հիմնադրմանն աջակցելու համար:

Բենիկ Պետրոսյանը ստեղծել է ժանրային, ոճական տարաբնույթ հորինվածքներ: Նա առաջինն էր, որ անդրադարձավ նաեւ մանրաքանդակին, հայ կերպարվեստում դարձավ դրա հիմնադիրը եւ անգերազանցելի վարպետը: Արվեստագետը, դիմելով փորձարարական բնույթի տարբեր հնարքների, հայտնագործեց նաեւ նյութի մշակման, ծուլման ու տեխնիկական այլ միջոցներ, որը վերաբերելով մանրաքանդակային արվեստի ստեղծագործական մտածողությանը, բացեց այդ ճյուղին բնորոշ արտահայտչական հնարավորությունների նոր սահմաններ: Քանդակագործն օգտագործել է տարբեր նյութեր՝ երկաթ, պողպատ, արծաթ, բրոնզ, տարբեր քարատեսակներ, լուծել դրանց համադրման խնդիրները:

Արվեստագետի անսպառ երեւակայության արդյունքում ստեղծվել են տարբեր թեմաներով եզակի քանդակներ՝ սկսած դիցաբանությունից մինչեւ մեր օրերի քաղաքական առօրյան պատկերող, որոնք համահունչ են բոլոր ժամանակներին:

Բենիկ Պետրոսյանի արվեստով հիանալու հաճույքը մեզ արդեն ընձեռվել է շնորհիվ «Բենիկ Պետրոսյան հիմնադրամի» նախագահ Ալիս Ադամյանի, որն իր զավակների հետ, մեծ դժվարություններ ու զրկանքներ կրելուց հետո, վերջապես կարողացավ քանդակները մեկտեղել թանգարանի հարկի տակ: Եվ ինչպես տկն Ադամյանն է ասում. «Բենիկի երազանքն ամեն գնով կիրականացնենք եւ հենց այս հարկի տակ արդեն նոր նախագծով կհիմնենք մանրաքանդակի միջազգային կենտրոն»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դիմադարձ ալիքներ

Ռաֆայել Ղազանչյանի «Հայրական ձեռագիր» գիրքը

Օրերս գրողների միությունում նոր գրքի քննարկում էր: Հրավիրված քննադատները, գրողներն ու լեզվաբանները եկել էին արժեքավորելու ու կայացման վկայագիր տալու 60-ական թթ. արձակի լավագույն ներկայացուցիչ, արդեն 10 գրքի հեղինակ Ռաֆայել Ղազանչյանի նոր՝ «Հայրական ձեռագիր» գրքին: Գիրքը Վան քաղաքից գաղթած իր հոր գրի առած հուշերի միջոցով, իր մոր պատմածի միջոցով ողջ Վանի ու ընդհանրացված՝ Արեւմտյան Հայաստանի ողբերգության պատկերումն է յուրովի: Հեղինակը մեծ վարպետությամբ կարողացել է մեզանից յուրաքանչյուրինը դարձնել գրքի ասելիքն ու նպատակը: Ոգեշունչ, սթափեցնող գիրք է:

Գրողների միության վարչության նախագահ Լեւոն Անանյանը բարձր գնահատեց գիրքը՝ որպես նոր հուշի ու հիշողության վավերագրում. «Մեր բոլորի գենետիկ կոդի մեջ կա կորստի ցավը: Այս գիրքը մեծ սիրո ու մեծ ցավի ծնունդ է: Եվ թեմատիկ առումով կարելի է մի ամբողջական վեպ համարել»:

Գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրության դոկտոր Ազատ Եղիազարյանը գիրքը գնահատեց հուշի ու հիշողության տեսանկյունից: Արծարծեց եղեռնի թեմային անդրադառնալու խնդիրը, որ նորություն լինի, չկրկնվի: Այս տեսակետից գիրքն արդարացնում է իր ծնունդը. «Ես հիշում եմ, դու հիշում ես, բոլորը հիշում են: Մոռացումը դավաճանություն է», պատմվածքներից մեկում այսպես է ասում հեղինակը: Այո՛, եզրահանգումը մեկն է՝ մենք պիտի կատարվածը փաստենք՝ լուսանկարով, գրքով, պատմական փաստերով, մենք պիտի մոռացումից փրկենք անգամ հուշի մի պատառիկ ու դարձնենք վկայություն մեծ դատի, որին պիտի պատասխանենք բոլորս:

Քննադատ Նորայր Ադալյանը շեշտեց, որ քանի դեռ մեր պահանջատիրությունը չի լուծվել, այս թեմայով պիտի գրել, պիտի բացահայտել, ինչպես արել է Ռաֆայել Ղազանչյանը, որ անպայման նոր շերտեր է բացել, որ անպայման նոր խնդիրներ է վեր հանել: «Ինչպես Խաչիկ Դաշտենցին, Մուշեղ Գալշոյանին, մյուսներին, Ռաֆայել Ղազանչյանին եւս հաջողվել է հուշից խնդիր բխեցնել: Հիացմունք է պատճառում Վանի բարբառի հմուտ տիրապետումը եւ այն ճկուն, գունագեղ հայերենը, որով ավելի ստամոքս է դառնում ասելիքը», ասաց Ն. Ադալյանը:

«Հայրական ձեռագիր» գիրքը որպես հուզական իմաստություն բնորոշեց գրողների միության վարչության քարտուղար, քննադատ Դավիթ Մուրադյանը: Նա հետաքրքրական դիտարկում արեց. «Նման գրքերը պետք է գրվեն՝ անպայման նկատի ունենալով օտար աչք ու ականջը, գրվեն այնպես, ասես հայը նամակ է գրում օտարին, ոչ թե հայը՝ հային: Եվ այս գիրքն այս առումով եւս արժեքավոր է»:

«Հայրական ձեռագիր» գիրքը տարբեր տեսանկյուններից արժեքավորեցին եւ հեղինակին բարեմաղթեցին նաեւ գրող Լեւոն Միրիջանյանը, Աբգար Ափինյանը, Լյուդվիգ Կարապետյանը,

լեզվաբան Վազգեն Համբարձումյանը եւ ուրիշներ:

Նշենք, որ գիրքը տպագրվել է պետական պատվերով եւ դրանում իր մեծ լուման ունի ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության հրատարակչական գործի գործակալությունը:

Նկարիչ Նիկոլայ Մանուկյանը գրքի կազմի ու առաջին, երկրորդ էջերի ձեւավորումով յուրովի լրացրել ու ամբողջացրել է գրքի ասելիքը: Ինքն իրեն ու մեզ է սփոփում նկարիչը երեւի, երբ պատկերում է վերեւից այդ ահասարսուռ տեսարանը դիտող «փրկված» անմեղ կանանց հոգիները: Գեղեցիկ մտահղացում է հոր ձեռագրի արտատպումը:

Հեղինակի՝ տաղանդաշատ գրող Ռաֆայել Ղազանչյանի համար դժվար էր արտահայտվելը: Նրա շիտակ աչքերում անհանգստություն կար, բնական շփոթմունք: Գիրք գրելը եւ առավել եւս հանրությանը հանձնելը պատասխանատու պահ է: Իսկ գիրքը, ով գործ ունի գիր-գրականության հետ, գիտե, թե ինչ տքնանքով, հոգու, մտքի ինչպիսի տանջանքով է հղացվում, ցավեցնում քեզ, հետո նոր դառնում բառ ու պատկեր: Նա շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր փորձ ինչ մասնակցություն են ունեցել, որ իր ցավը, հայրական ձեռագրի ու արյան պատգամի հանդեպ իր պարտքը դառնա գիրք, ոգեշունչ ու ստամոքս յուրաքանչյուր հայի հոգուն:

ՀՅՈՒՆԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄՆ

Արվեստագետ ընտանիքի ստեղծագործ ոգին

Բոստոնի հյուսիսում գտնվող Ուորեն քաղաքի «Միլենիում մյուզիք սենթրում» վերջերս ավարտվել է «Մոխիրների հանդեպ գեղեցկություն» պիեսի ներկայացումը, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» թերթը: Դրանում ընդգրկված են եղել Ջոնյան ընտանիքի անդամները. Պոլը՝ վերոհիշյալ կենտրոնի երաժշտական ղեկավարը, Մոնան՝ նրա կինը, որդին՝ Ջոշուա-Պոլը եւ նրա կինը՝ ժանետը, ինչպես նաեւ մյուս երկու զավակները:

Պոլի նախնիները, եթե իրենց անունը փոխած չլինեին, նրան այժմ պետք է կոչեին Պողոս Տեր-Հովհաննիսյան: Հորական կողմից նա Խարբերդից է, իսկ մորական կողմից նրա արմատները հասնում են Գերմանիա: Բնիկ Մասաչուսեթսցի Պոլը մեծացել է Վինչեստրում: Նա ջութակահար է, ավարտել է Նյու Ինգլենդի, Բոստոնի եւ Պուերտո Ռիկոյի երաժշտանոցները: Կնոջ հետ շատ է ճանապարհորդել Մ. Նահանգներում, Եվրոպայում եւ Ասիայում, որտեղ ներկայացումներից բացի նաեւ դասախոսություններ են կարդացել:

«Մեր ներկայացրած պիեսները հիմնված են մեր բարեկամներից եւ ծանոթներից լսած պատմությունների վրա, որոնց միահյուսված են ընտանեկան եւ ընդհանրապես մարդկային արժեքներ: «Դրանք գեղեցիկ են եւ պետք է հարատեւեն», նշում է պիեսների հեղինակ Մոնան, որի ստեղծագործական կենսագրության մաս են կազմում 30-ից ավելի գրքեր եւ հազարից ավելի երգեր: Նա աշխատակցում է նաեւ «Յուրոպիեն» եւ «Ուոլ սթրիթ ջոռնալ» թերթերին: Պիեսների թվում կարելի է հիշատակել «Մեծ բանավեճ» (որը Նյու Յորքում է ներկայացվել նաեւ), «Ճակ՝ ցանկապատում», «Ջոդի» եւ «երբ անանասը հասունանա» գործերը, որոնք կյանքից վերցված դրվագներ են պարունակում: Մեր, հավաս, պայքար ընդդեմ չարի, մարդկային հարաբերություններ՝ սրանք են շոշափված թեմաները, որոնք միշտ այժմեական լինելով շարունակում են, ըստ թերթի հոդվածի, հուզել հանդիսատեսներին:

Հ. Ծ.

Հայ թենիսիստների հաղթական մեկնարկը

Թենիսի Ուիմբլդոնյան մրցաշարի մեկնարկը հաջող էր հայ թենիսիստների համար, որոնք հաղթահարեցին առաջին արգելքը: Սարգիս Սարգսյանը Բոգդանովիչի հետ անցկացրած բոլոր երեք խաղափուլերում էլ առավելության հասավ (6-1, 6-3, 6-2): Ուիմբլդոնյան մրցաշարի անցյալ տարվա եզրափակիչի մասնակից Դավիթ Նալբանդյանի մրցակիցը բելառուսցի Վլադիմիր Վոլչկովն էր: Վերջինիս համար առայժմ լավագույն ցուցանիշը 2000 թ. Ուիմբլդոնում կիսաեզրափակիչում հանդես գալն է: Դավիթը ևս վստահ անցկացրեց ամբողջ հանդիպումը եւ հաղթեց բոլոր խաղափուլերում (7-5, 6-4, 6-2): Ուիմբլդոնում հայերի հաղթարշավը շարունակեց նաեւ Շվեյցարիայում բնակվող Մարի-Գայանե Միխայելյանը: Նա բավական համառ մրցախաղում պարտության մատնեց Իրվինին (7-5, 2-6, 8-6): Հաղթանակով մեկնարկեց նաեւ Անդրե Աղասին: Առաջին երկու խաղափուլերում նա Դելգադոյին հաղթեց 6-4, 6-0 հաշվով եւ թվում էր, թե մրցակիցն այլեւս ընդունակ չէ դիմադրելու: Սակայն Դելգադոն 3-րդ խաղափուլում հասավ հաղթանակի (7-5): Ճիշտ է, նրա ուրախությունը կարճ տեւեց. հաջորդ խաղափուլում Աղասին վերջնականապես շահեց մրցախաղը:

Իր երկրպագուներին տհաճ անակնկալ մատուցեց Եվգենի Կաֆելնիկովը: Հոլանդացի Սլեյտերին զիջելով առաջին խաղափուլը (5-7), ռուս թենիսիստը հետզհետ շահեց հաջորդ երկուսը (6-3, 6-2): Սակայն զգացնել տվեց Կաֆելնիկովի ֆիզիկական անբավարար պատրաստվածությունը: Նա չէր հասցնում հետ մղել մրցակցի հուժկու հարվածները եւ հաջորդ երկու խաղափուլերում պարտվեց (2-6, 3-6): Առաջին փուլի արգելքը հաջողությամբ հաղթահարեցին նաեւ Ռոխուսը, Սոլենն, Ֆիլիպուսիսը, Դեյոերը, Ստեպանեկը, Այնաուին, Սան, Կուչերան, Հենմանը, Սուզուկին, Գալվանին, Նովակը, Էսկյուդեն, Ֆեռերոն:



Կանանց մրցաոայքարում առանց մեծ ծիգերի առաջին արգելքը հաջողությամբ հաղթահարեց Սերենա Ուիլյամսը: Նա միեւնույն 6-3 հաշվով 2 խաղափուլում հաղթեց Կրեյբասին: Ջենիֆեր Կապրիատին էլ հեշտությամբ պարտության մատնեց Կազանովային (6-1, 6-3): Ելենա Դեմենտեւան ավելի ուժեղ գտնվեց Ռոյշի հետ մրցավեճում (6-2, 6-1): Հաղթանակի համար Ելենայից ընդամենը 47 րոպե պահանջվեց: Ավելի դժվար էր մեկնարկը ռուսաստանցի մեկ այլ թենիսիստուհու՝ Ելենա Լիխովցեւայի համար, որն անցյալ տարի դարձավ առաջին ռուս թենիսիստուհին, որին հաջողվել էր 1997 թ. հետո հանդես գալ Ուիմբլդոնյան մրցաշարի խառոդ եզրափակիչում: 27-ամյա մոսկվացի մարզուհուց ավելի քան 1,5 ժամ պահանջվեց ամերիկուհի Լինդսեյ Լի Ուոտերսի դիմադրությունը հաղթահարելու համար:

Ուիմբլդոնյան մրցաշարի նորեկ 17-ամյա Դինարա Սաֆինան չկարողացավ լրջորեն դիմադրել Սոլիկին (1-6, 6-4, 4-6): Հաջորդ փուլում հանդես գալու իրավունք ստացան նաեւ Մորիգաման, Դոկիչը, Գալլարդին, Կալենսը, Միսկինան, Կրասնոռուցկայան, Լուան, Մարտինեսը, Էնենը, Դանիլիդուն, Շարապովան, Ռեյմոնդը, Բովինան, Շեսն ու Պյերսը:

Մալոֆեեւի հրաժարականն ընդունվեց

Բելառուսի ֆուտբոլի ֆեդերացիան ընդունել է ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Էդուարդ Մալոֆեեւի հրաժարականը: Այդ մասին նա դիմում էր ներկայացրել հունիսի 16-ին՝ Ավստրիայի հավաքականի հետ ընտրական հանդիպումից 5 օր անց: Հրաժարականի պատճառն ավստրիացիներից կրած խոշոր հաշվով (0-5) պարտությունն էր, ինչպես նաեւ ընտրական մրցաշարում հավաքականի անհաջող ելույթը: Մալոֆեեւի գլխավորությամբ Բելառուսի հավաքականը եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 6 հանդիպումներից 5-ում պարտվել է, ընդ որում ավստրիացիներից կրած անհաջողությունն ամենախոշորն էր հավաքականի պատմության մեջ: 61-ամյա Մալոֆեեւը հավաքականը գլխավորում էր 3 տարի: Այդ ընթացքում բելառուս ֆուտբոլիստները հասել էին ամենաբարձր արդյունքի՝ 2002 թ. ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում գրավելով 3-րդ տեղը:

Բելառուսի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը երկրի ֆուտբոլի զարգացման գործում ունեցած ավանդի համար էդուարդ Մալոֆեեւին թանկարժեք պարգեւի է արժանացրել: Հավաքականի մարզչի թեկնածուների որոնման նպատակով կազմավորվել է հանձնախումբ, որի կազմում են նաեւ ֆեդերացիայի փոխնախագահ Միխայիլ Վերգեենկոն, մարզչական խորհրդի նախագահ Անատոլի Յուրեւիչը: Մինչեւ հուլիսի 15-ը պետք է թեկնածուների հարցը քննարկվի գործկոմում: Հակառակ դեպքում կնշանակվի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնակատարը:

«Ֆրանս ֆուտբոլն» անվանում է լավագույններին

Ամեն տարի եվրոպական առաջատար ֆուտբոլային երկրների առաջնությունների ավարտից հետո «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթը հարցման արդյունքներով որոշում է մրցաշրջանի խորհրդանշական հավաքականի կազմը: Ժյուրիի կազմում ընդգրկվել էին 10 ֆրանսիացի խաղացողներ ու մարզիչներ, 10 օտարերկրացիներ, որոնց թվում էին Չեզարե Մալդինին, Լուիշ Ֆիգուն եւ Կառլոս Ալբերտո Պարեյրան, ինչպես նաեւ համաշխարհային ֆուտբոլի 10 նախկին «աստղեր»: Վերջիններիս կազմում էին Ալդո Սերենան, Լուի վան Գալը, Զբիգնեւ Բոնեկը, Թոմիսլավ Իվիչը, Յուրգեն Կլինսմանը եւ ուրիշներ:

Խորհրդանշական հավաքականի կազմն այսպիսին է. Ջանլուիջի Բուֆոն, Պաոլո Մալդինի, Ալեսանդրո Նեստա, Ռոբերտո Կառլոս, Լիլիան Թյուրամ, Զինեդին Զիդան, Պավել Նեդվեդ, Կլոդ Մակելելե, Ռաուլ, Տյերի Անրի, Ռուդ վան Նիստելրոյ:

Ռոմարիոն վերադարձել է «Ֆլումինենսե»

Բրազիլական ֆուտբոլի վետերան Ռոմարիոն վերադառնալով Քաթարից, կրկին հանդես է գալիս «Ֆլումինենսեում»: Իր վերադարձը հարազատ կոլեկտիվ Ռոմարիոն նշանավորեց «հեթ-տրիկով»: Բրազիլիայի առաջնության հերթական խաղում նա 3 անգամ գրավեց «Գուարանիի» դարպասը՝ նպաստելով «Ֆլումինենսեի» հաղթանակին (5-2): Այդ խաղում հյուրերի ֆուտբոլիստներից երեքը հեռացվեցին խաղադաշտից, իսկ 85-րդ րոպեին կրթերն այն աստիճան բորբոքվեցին, որ ոստիկանությունը ստիպված էր մտնել խաղադաշտ պաշտպանելու մրցավարներին ֆուտբոլիստների հարձակումներից:

Խաղացանկը հայտնի է

Հայտնի է դարձել վոլեյբոլի կանանց Գրան պրիի խաղարկության խաղացանկը: Մրցաշարն անցկացվելու է Իտալիայում հուլիսի 21-ից օգոստոսի 3-ը: Մրցանակային հիմնադրամը կկազմի 1 մլն դոլար: Նախնական փուլում 12 հավաքականները բաժանվել են երկու խմբի ըստ իրենց վարկանիշների: «Ա» խմբում հանդես կգան Իտալիայի, ԱՄՆ-ի, Կուբայի, Ճապոնիայի, Հոլանդիայի եւ Գերմանիայի հավաքականները, «Բ» խմբում մրցավեճի կբռնվեն Ռուսաստանի, Չինաստանի, Բրազիլիայի, Կանադայի, Թաիլանդի եւ Կորեայի վոլեյբոլիստուհիները: Յուրաքանչյուր խմբից 3-ական լավագույնները կմտնեն եզրափակիչ փուլ, որտեղ մեկ շրջանով կվիճարկեն մրցանակը: Ընդ որում, Իտալիայի հավաքականն անկախ նախնական փուլի արդյունքներից որպես մրցաշարի կազմակերպիչ կընդգրկվի եզրափակիչում:

Միլուտինովիչը գլխավորեց Սերբիայի հավաքականը

Սերբիայի եւ Չեռնոգորիայի հավաքականի նոր գլխավոր մարզիչ է նշանակվել հանրահայտ ֆուտբոլային մասնագետ Բորա Միլուտինովիչը: Նա այդ պաշտոնում կփոխարինի Դեյան Սավիչեւիչին, որը հրաժարական էր տվել ադրբեջանցիներից կրած պարտությունից հետո (1-2): Միլուտինովիչը նախկինում աշխատել է ԱՄՆ-ի, Չինաստանի, Մեխիկայի, Կոստա Ռիկայի եւ Նիգերիայի հավաքականներում, նրանցից յուրաքանչյուրին աշխարհի առաջնության ուղեգիր է պարգեւել:

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

«Ոսկե ոտքի» 10 հավակնորդները հայտնի են

«Ազգն» իր ընթերցողներին տեղեկացրել էր, որ World Champions Club ընկերությունը Մոնակոյի արքայազն Ալբերի եւ La Gazzetta dello Sport թերթի աջակցությամբ սահմանել է «Ոսկե ոտք» մրցանակը եւ Մոնտե Կառլոյում հիմնել է ֆուտբոլային «աստղերի» ծառուղի: Յուրաքանչյուր տարի հատուկ ժյուրին կորոշի համաշխարհային ֆուտբոլի ներկայիս այն «աստղին», որն իր ոտքի հետքը կթողնի այդ ծառուղում: Բացի այդ, կընտրվի նաեւ անցյալի հանրաճանաչ ֆուտբոլիստներից մեկը: Հատուկ ժյուրին ընտրել է հետեւյալ 10 ֆուտբոլիստներին. Ռոբերտո Բաջիո (Իտալիա), Գաբրիել Բաթիստուտա (Արգենտինա), Ռայան Գիգզ (Ուելս), Զինեդին Զիդան (Ֆրանսիա), Օլիվեր Կան (Գերմանիա), Ռոբերտո Կառլոս (Բրազիլիա), Պաոլո Մալդինի (Իտալիա), Պավել Նեդվեդ (Չեխիա), Ռոմարիո (Բրազիլիա), Լուիշ Ֆիգու (Պորտուգալիա): Այս ցանկն ընտրվել է հաշվի առնելով ֆուտբոլիստներից յուրաքանչյուրի ելույթը ոչ թե մեկ մրցաշրջանում, այլ ֆուտբոլային ողջ կենսագրությունում: Այժմ այս ցանկը ներկայացված է «Ոսկե ոտք» մրցանակի www.goldenfoot.com ինտերնետային սայթում: Մինչեւ օգոստոսի 5-ը ֆուտբոլասերները կարող են իրենց ձայնը տալ նրանցից որեւէ մեկին: Ընդ որում հարկավոր է նշել անունազգանունը, տարիքը, ազգը, բնակության վայրը, սիրելի թիմի անվանումը: Նման ձեւով ընտրված փառքի ծառուղու առաջին դափնեկիրը հայտնի կդառնա օգոստոսի 26-ին Մոնակոյում, որտեղ այդ օրը տեղի կունենա հանդիսավոր արարողությունը: Այդ միջոցառմանը ներկա կգտնվի նաեւ հարցմանը մասնակցած ֆուտբոլասերներից այն երջանիկը, որին կընտրի համակարգիչը:

Անցյալի «աստղերից» «Ոսկե ոտք» մրցանակին առաջինը կարժանանան արգենտինացի Դիեգո Մարադոնան եւ բրազիլացի Կառլոս Դունգան: Եթե Մարադոնայի թեկնածությունն անվիճելի է, ապա Դունգայի ընտրությունը բացատրվում է հետեւյալով: Կազմակերպիչները որոշել են, որ ամեն տարի միջոցառումից ստացված հասույթը պետք է տրամադրվի որեւէ բարեգործական հիմնադրամի: Ընտրվել է Դունգայի ծրագիրը, ըստ որի բրազիլացի աղքատ ընտանիքների երեխաների համար պետք է փոքրիկ ավան կառուցվի:

Լավագույնը Ռաուլն է

Ավանդույթի համաձայն ֆուտբոլի Իսպանիայի առաջնության ավարտից հետո երկրի 20 առաջատար մարզիչներից կազմավորված ժյուրին անվանում է երկրի եւ աշխարհի լավագույն խաղացողներին ու մարզիչներին: Արդեն 3-րդ անգամ Իսպանիայի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվում Մադրիդի «Ռեալի» եւ երկրի հավաքականի հարձակվող Ռաուլը: Նրա թիմակից Զինեդին Զիդանը ճանաչվել է լավագույն լեգեոներ: Առաջնության լավագույն նորեկի մրցանակին է արժանացել «Ռեալ Սոսյեդադի» 21-ամյա ֆուտբոլիստ Խաբի Ալոնսոն: Հենց նրա արդյունավետ խաղի շնորհիվ էր թիմը բավական ժամանակ գլխավորում աղյուսակը: Իսկ այդ թիմի մարզիչ Ռեյնալդ Դենույեկսը ճանաչվել է լավագույնը:

Ժյուրին աշխարհի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչել «Մանչեսթր յունայթեդի» հոլանդացի հարձակվող Ռուդ վան Նիստելրոյին:

Թայսոնը կրկին կկանգնի դատարանի առաջ

Գերծանր քաշային կարգում պրոֆեսիոնալ բոքսամարտի աշխարհի նախկին չեմպիոն Մայք Թայսոնը հուլիսի 24-ին կրկին կկանգնի դատարանի առաջ: Նրան մեղադրանք է առաջադրվել մարդկանց վրա հարձակվելու եւ հասարակական կարգը խախտելու համար: Եթե դատարանում Թայսոնը չկարողանա ապացուցել իր անմեղությունը, ապա նրան սպասում է մեկ տարվա բանտարկություն:

Միջադեպը տեղի էր ունեցել օրերս Բրուկլինի «Մարիոս» հյուրանոցի նախասրահում: Սկզբում Թայսոնի եւ իսպանացի երկու հաճախորդների միջեւ լեզվակռիվ էր սկսվել, ապա իսպանացիներից մեկը փորձել էր աբոռով հարվածել Թայսոնին: Երկու իսպանացիներն էլ՝ 24-ամյա Նեստոր Ալվարեսն ու 31-ամյա Սամուել Վալեսն արժանացան Թայսոնի հուժկու հարվածներին: Դեպքի վայր ժամանած ոստիկանները բաժանեցին կռվող կողմերին եւ նրանց ուղեկցեցին ոստիկանատուն, որտեղ մեկ ժամ հետո Թայսոնին ազատ արձակեցին: Դեպքի ականատեսների վկայությամբ վիճաբանությունը սկսել էին իսպանացիները:

Սա առաջին դեպքը չէ, որ իր կռվարար բնավորությամբ աչքի ընկնող Մայք Թայսոնը հայտնվում է դատարանում: Հիշեցնենք, որ 1991 թ. «Ամերիկայի գեղեցկուհի» մրցույթի դափնեկիր 18-ամյա Դեզիրե Վաշինգտոնին բռնաբարելու համար Թայսոնը 6 տարվա ազատազրկման էր դատապարտվել, որից 3-ն անցկացրեց բանտում: Ի դեպ, հենց բանտում էլ նա մահմեդականություն ընդունեց: Հետագայում էլ Թայսոնն աչքի է ընկել իր ագրեսիվությամբ: Հիշենք թեկուզ էվանդեր Հոլիֆիլդի հետ մենամարտը, երբ Թայսոնը կծեց մրցակցի ականջը:

Ճախմաշիստները սկսել են մրցավեճը

Նախիջեւանում մեկնարկել է մինչեւ 20 տարեկան պատանիների եւ աղջիկների ճախմաշի աշխարհի հերթական առաջնությունը: Այս անգամ Հայաստանը ներկայացված չէ մրցաշարում: Հիշեցնենք, որ անցյալ տարվա վերջին Կալկաթայում անցկացված նմանատիպ մրցաշարում փայլուն էր հանդես եկել հայ գրոսմայստեր Լեւոն Արոնյանը՝ նվաճելով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Պատանիների մրցաշարում խաղացված չորս տուրից հետո առաջատարի դերը 3,5-ական միավորով ստանձնել են Գերմանիան ներկայացնող Լեոնիդ Քրիցը, ադրբեջանցի Կադիր Հուսեյնովը եւ լեհ Մարցին Զյուբան: Աղջիկների մրցաշարում 3 տուրից հետո 100 տոկոսանոց արդյունքի են հասել վրաց ճախմաշիստուհի Նանա Ջագնիձեն եւ ռումինուհի Քրիստինա Ցալոտեսկուն:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ոստիկաններն ընդդեմ ընտանեկան բռնության

ԵՐԵՎԱՆ, 25 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏՍՊԱՆ: Ընտանեկան բռնության հիմնախնդիրը վերացնելու համար նախաձեռնություն է մեկնարկել երեւույթի դրդապատճառները: Այս մասին ասաց ոստիկանության գնդապետ Կարեն Մեղրաբյանը հունիսի 25-ին «Պայքար ընտանեկան բռնությունների դեմ» թեմայով վերապատրաստման դասընթացին, որ ՀՀ Ոստիկանության աշխատակիցների համար կազմակերպել է ԵԱՀԿ երեւանյան գրասենյակը: Գնդապետ Մեղրաբյանը հայտնեց, որ 2002 թ. Հայաստանում հաշվառվել են 408 անհաշտ ընտանիքներ, սակայն ուսումնասիրությունների արդյունքում դրանցից 26-ը համարվել են հաշտ:

Միջոցառմանը մասնակցում են ոստիկանության 30 բարձրաստիճան աշխատակիցներ, որոնք եռօրյա դասընթացների ընթացքում պետք է ճնարկեն ոստիկանության դերը ընտանեկան բռնությունների կանխարգելման գործում: Դասընթացի ընթացքում Ավստրիայից հրավիրված երեք փորձագետները կներկայացնեն արեւմտյան մի շարք երկրներում ընտանեկան բռնությունների դեմքերին առնչվող ոստիկանության աշխատանքի օրինակներ:

Վիեննայի Ֆեդերալ ոստիկանության բաժանմունքի ներկայացուցիչ Քրիստիան Շտրասերը նշեց, որ այս երեւույթը գոյություն ունի ամբողջ աշխարհում, եւ պարզվել է, որ կանայք ավելի շաս անպաշտպան են հենց իրենց ընտանիքներում: Հայաստանում այս երեւույթը լայն տարածում ունի, նշեց Քրիստիան Շտրասերը, բերելով տվյալներ, ըստ որոնց հայ կանանց մոտ 80%-ը ենթարկվում են ընտանեկան բռնությունների:

Ծրագիրն իրականացվում է Հարավային Կովկասի տարածաշրջանում. համապատասխան վերապատրաստման դասընթացներ արդեն անցկացվել են Վրաստանում եւ Ադրբեջանում:

Համակարգչային վիրուսները գրոհում են

Հասարակո՞ւթ է ազատվել դրանցից...

Միայն այս տարվա հունվարին աշխարհում գրանցվել են համակարգչային վիրուսի 4 խոշոր համաճարակներ, մինչդեռ նախորդ տարվա ընթացքում եղել էր ընդամենը 6-ը:

Այս տարվա մայիսին արձանագրվեց մեծ հետեւանքներ առաջացնող վիրուսային նոր համաճարակ, որի բերած վնասները դեռեւս շարունակվում են: Այս օրերին ամենատարածված ակտիվ վիրուսներն են I-Worm.Bioron-ը եւ I-Worm.Tonotos-ը:

Որո՞նք են վիրուսների տարածման հիմնական ճանապարհները: Դրանք ներխուժում են էլեկտրոնային փոստի, ինտերնետային զրույցների եւ սայթերի միջոցով: Մասնագետների գնահատմամբ վիրուսների 80-90 տոկոսը տարածվում է էլեկտրոնային փոստի միջոցով:

Էլեկտրոնային փոստի հիմնական տեխնոլոգիաները պրովայդերների ստեղծած սերվերներն են, որոնց միջոցով էլ ընդհանուր առմամբ օգտվում են էլ. փոստի ծառայություններից:

Իսկ ի՞նչն է պատճառ դառնում վիրուսների տարածմանը: Առաջին հերթին ինտերնետից օգտվողների հնության պակասը, հակավիրուսային արդյունավետ ծրագրերի փաստացի բացակայությունը (թանկության պատճառով) եւ էլեկտրոնային ծառայությունների կազմակերպիչների (պրովայդերների) կողմից հակավիրուսային միջոցառումների բացակայությունը:

Միանգամայն ճիշտ են այն կարծիքները, ըստ որոնց էլեկտրոնային նամակները պետք է վնասազերծվեն վիրուսներից: Իհարկե, ամենայն հավանականությամբ, պրովայդերները նման կարծիքների համաձայն չեն լինի, քանի որ վնասազերծումը նրանց նոր ծախսեր եւ հոգսեր կբերի:

Որտե՞ղ է ոսկե միջինը: Եթե հաշվի առնենք, որ համակարգիչով աշխատողների թիվն օրեցօր շատանում է, ապա, բնականաբար, ենթադրվում է աշխատանքի հնության նվազում: Եթե պրովայդերները խուսափեն վիրուսները վնասազերծելու պարտավորությունից, ապա մշտապես կլինենք վիրուսային վտանգի մեջ, որը ոչ ոքի ձեռնտու չէ: Կարծում ենք, որ պրովայդերների հետ համագործակցող պետական մարմինները առավել ուշադրության կարժանացնեն այս խնդիրը եւ պրովայդերների սերտիֆիկացման ժամանակ որպես առաջնային պահանջ կդնեն հակավիրուսային ծառայությունների ապահովումը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Կորել է «Ազգի» լուսանկարչական ապարատը

Հունիսի 24-ի երեկոյան ժամը 19:30-ի մոտերը, 91 համարի երթուղային տաքսում կորել է «Ազգ» թերթի խմբագրությանը պատկանող թվային լուսանկարչական ապարատը: Հավանաբար Նորքի 7, 8 կամ 9-րդ զանգվածների բնակիչ միջին տարիքի կինը, որին «Ազգի» աշխատակիցն ի պահ էր տվել ապարատը մինչեւ իջնելը, կարող է դիմել թերթի խմբագրություն՝ Հանրապետության 47 հասցով: Կամ զանգահարել 58-18-41, 65-36-16 հեռախոսահամարներով: Խոստանում ենք դրամական պարգեւ: Տեղեկացնենք, որ ապարատը նախատեսված չէ կենցաղում օգտագործելու համար:

BMW OPEL

ԱՎՏՈՊԱՇԵՍՏԱՄԱՍԵՐԻ ԽԱՆՈՒԹ

Ներկրումը միայն Գերմանիայից, ընդունվում են նաեւ պատվերներ: Հասցեն՝ Ամիրյան 8, Ե. Չարենցի դպրոցի դիմաց.
հեռ. 560262, (09)429061

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In English, Russian, Armenian and Turkish

22 նոր նամականիշեր

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարարությունը հունիս ամսին փոստային շրջանառության մեջ է դնելու՝

- հունիսի 24-ին EUROPA 2003 շարքին նվիրված «Ազդանշարի արվեստ» թողարկումը՝ բաղկացած երկու նամականիշից եւ այդ նամականիշերով գրքույկից
- հունիսի 25-ին «Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին» նվիրված մեկ նամականիշ
- հունիսի 26-ին «Շրջակա միջավայրի համաշխարհային օրվան» նվիրված մեկ նամականիշ:

Նամականիշերը մարվելու են թիվ 9 փոստի բաժանմունքում առաջին օրվա հատուկ մարման դրոշմակներով: Տպագրությունը կատարված է Ֆրանսիայի Cartor Security Printing տպարանում:

Գիտական դրամաշնորհների մրցույթի հրավեր

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո գործող Գիտության եւ կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ) Հայաստանի Հանրապետության գիտնականներին եւ հետազոտողներին հրավիրում է 2004 թ. գիտական դրամաշնորհների մրցույթի: Դրամաշնորհի չափը մինչեւ 5000 ԱՄՆ դոլար է:

Տպագիր դիմումները պետք է ներկայացվեն անգլերեն՝ ոչ փոքր, քան տպագրական 10 տառաչափով եւ ուղարկվեն էլեկտրոնային փոստով՝ չգիրքավորված Mikrosoft Word ֆորմատով:

Բյուջեն ներառելու է թե՛ գլխավոր հետազոտողի, թե՛ մյուս մասնակիցների աշխատավարձերը, սարքավորումների գնման, ճանապարհորդական եւ այլ ծախսեր, նաեւ 5 տոկոս այն հաստատության վերադիր ծախսերը, որտեղ գիտական խումբն աշխատում է:

Գիտական դրամաշնորհների մրցույթի մասնակցության դիմումների վերջին ժամկետը 2003 թ. օգոստոսի 15-ն է: Արդյունքները հայտնի կդառնան սույն տարեվերջին, իսկ դրամաշնորհումը կկատարվի 2004 թ. հունվարին:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել www.ansef.org/submissions2004/ ինտերնետային էջը:

ՀՕՖ-Ի ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՎ ԴԵՊԻՆ ԷՋԵՐ

Գործարար տեղեկատվություն գործարարների համար

ՍՈՖՅԱՆ տեղեկատվության ծառայություն

Կիեւան-18, Պետական թաղամաս 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 582835, 583505 E-mail: info@sofyan.am

529353 ԱՌԱՔՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- «Ռոսիա» կինոթատրոնի տարածքում կորել է Նարինե Նալբանդյանի վարորդական իրավունքը. Ուշադրություն դարձնել վարորդական իրավունքը, վազ 21 07 մակնիշի 02 SL 169 համարանիշով ավտոմեքենայի տեխնիկական անձնագիրը: Վերադարձնողին խոստանում ենք դրամական պարգեւ: Հեռ.՝ 36 97 98, 09 40 74 16:
- Վաճառվում է բջջային հեռախոս Motorola C350, գունավոր էկրանով: Գինը՝ $180: Sony Z7: Գինը՝ $180:
- Կորել է Գուրգեն Արտաշեսի Թովմասյանի տրանսպորտային երթեւեկության վկայականը: Համարել անվավեր:
- Կարող եմ կազմակերպել ցանկացած կարգի հասարակական սննդի ձեռնարկության աշխատանքներ: Հեռ.՝ 735086:
- Վաճառվում է գերմանական գորգ, նոր, 2x3: Գինը՝ 200 դոլար: Հեռ.՝ 429343:
- Վաճառվում է մետաղյա ավտոտնակ, 18 քմ (3x6): Հեռ.՝ 725449:
- Վաճառվում է 3 սենյականոց (վերափոխված 5 սենյակի) բնակարան մայրաքաղաքի փոքր կենտրոնում: Հասցեն՝ Աղայան 9, բն. 63: Հեռ.՝ 267992:
- Վաճառվում է խանութի տարածք, վերանորոգված, բնակելի շենքի 1-ին հարկում՝ իր նկուղներով: Հասցեն՝ Բաբաջանյան փ., 153/1 շենք: Հեռ.՝ 239191:
- Վաճառվում են դոքերման տիպեր գեղատեսակի գտարյուն նորածին ձագեր: Գինը՝ 100 դոլար: Հեռ.՝ 584908:
- Պարապում եմ խոստակցական անգլերեն երեխաների եւ մեծահասակների հետ, մասնելի գնով, անհատական եւ խմբակային: Զանգահարել՝ 22-79-76 (երեկոյան ժամերին), Նիկին (բնիկ կալիֆոռնիացի):
- Պարապում եմ անգլերեն՝ առանց տարիքային սահմանափակման, ինչպես նաեւ կատարում եմ թարգմանություններ անգլերենից հայերեն եւ հակառակը: Զանգահարել՝ 230786, Հասմիկ:
- Կատարում եմ տնային մատրություն, ինչպես նաեւ կարում եմ վերմակ եւ նեբրնակ: Հեռ.՝ 230786, Հռիփսիմե:
- Էրեբունի թանգարանը փնտրում է հովանավոր՝ կիրառական արվեստի եւ ժանյակագործության (Վասպուրականի) խմբակների համար: Հեռ.՝ 523202, 572797:
- Պահանջվում են ավտոլվացողներ, ավտոէլեկտրիկներ: Աշխատավայրը գտնվում է «Նաիրի» կինոթատրոնի մոտ: Զանգահարել 56-2029 հեռախոսահամարով, կամ այցելել մ. Երեւան, Գ. Քոչարի 21:
- Շտապ վաճառվում է ռումինական հյուրասենյակի կահույք պատ՝ իր փափուկ կահույքով, նաեւ սառնարան: Հեռ.՝ 65-68-37:
- Վաճառվում է «Իկարուս» մակնիշի ավտոբուս 1985 թ. արտադրության, արտակարգ վիճակում, նոր վերանորոգված, շարժիչը՝ «ԿՊԱՅ»-ի լավ վիճակում, գույնը՝ կարմիր, սրահն ամբողջովին նոր: Գինը՝ 5000 ամերիկյան դոլար: Հեռ.՝ (041) 21 607, Հովիկ:
- Շտապ վաճառվում են օգտագործված ռումինական մահճակալ, հարավսլավական սոֆա: Հեռ.՝ 26-01-80, 22-89-01:
- Տրվում է վարձով 1,5 սեն. բնակարան փոքր կենտրոնում 10/5: Հեռ.՝ 62-58-35:
- Կգնեմ իգի քարտ: Հեռ.՝ (09) 423833:
- Վաճառվում է ամառանոց Արայի լեռան լանջին, Երեւանից 50 կմ հեռավորությամբ: Ամառանոցը երկհարկանի շինություն է, ավտոտնակով, 1000 քմ հողատարածքով, ունի 120 հաս ծառ: Գինը՝ 5000 դոլար: Հեռ.՝ 25-00-96, Հունան:
- Վաճառվում է 3 սենյականոց բնակարան շամպայն գինիների գործարանի մոտ, 16-րդ հարկի 4-րդ հարկում, արեւկող, ընդ. մակերեսը՝ 80 քմ, բնակելին՝ 44 քմ, ունի երկու սնտեսական պատգամ: Գինը՝ 11.500 ԱՄՆ դոլար: Հեռ.՝ 45 22 79:
- Վաճառվում է բջջային հեռախոս «Ալկատել-525», փոխվող պանելով, գինը՝ 190 դոլար: Հեռ.՝ 45 22 79:
- Վաճառվում է 1985 թ. արտադրության «Մերսեդես-Բենց» 230E մակնիշի ավտոմեքենա: Գինը՝ $ 4000: Հեռ.՝ 48-21-19

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 24. 6. 2003 Գինը՝ 100 դրամ